

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ 2025-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ


1. Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 539-Ն որոշմամբ հաստատվել է «Հարավային ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» որոշումը, իսկ Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի նիստի N 20 արձանագրության 3-րդ կետով հավանության է արժանացել հարավային ջրավազանային տարածքի կառավարման պլանի 2016-2021 թվականների միջոցառումների ծրագիրը: Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 539-Ն որոշման գործողության ժամկետը 2021 թվականին ավարտվել է, իսկ արձանագրային որոշումը ուժը կորցրած է ճանաչվել (Կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1728-Ն որոշում):

2. Հարավային ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030 թվականների կառավարման պլանը հանդիսանում է ջրավազանային կառավարման 2-րդ վեցամյա գործողության փաստաթուղթ, որը մշակվել է՝ համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 17-րդ հոդվածի, «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» օրենքի 15-րդ հոդվածի, Ջրային քաղաքականության ոլորտում համայնքի գործողությունների շրջանակը սահմանող՝ Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/ԵՀ հրահանգի (ԵՄ ջրի շրջանակային դիրեկտիվ) և ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի հունվարի 27-ի թիվ 26-Ն հրամանի պահանջների:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ

1.1. Բնական պայմանները՝ տեղադիրքը և աշխարհագրական բնութագիրը.

3. Հարավային ջրավազանային կառավարման տարածքը (այսուհետ՝ հարավային ԶԿՏ) գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավում՝ Սյունիքի մարզում՝ ընդգրկելով մարզի տարածքն ամբողջությամբ՝ տես Նկար 1.1:



Նկար 1.1. Հարավային ԶԿՏ-ի տեղադիրքը ՀՀ տարածքում

4. Հարավային ԶԿՏ-ի մակերեսը 4498,17 կմ² է: Այն ընդգրկում է Որոտանի, Ողջիի և Մեղրիգետի գետավազանները:

1.1.1. Կլիմա.

5. Հարավային ԶԿՏ-ում առկա է 7 կլիմայական գոտի: Օդի բազմամյա տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 14,7°C-3,1°C միջակայքում (Աղյուսակ 1.1): Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է -34,4°C (Որոտանի լ/ք), իսկ առավելագույնը՝ +43,7°C (Մեղրի): Հարավային ԶԿՏ-ի օդի տարեկան և ամսական միջին ջերմաստիճանները ներկայացված են աղյուսակ 1.1-ում:

Աղյուսակ 1.1. Հարավային ՋԿՏ-ի օդի տարեկան և ամսական միջին ջերմաստիճանները, 1961-2024 թվականներ, °C

Օդերևութաբանական կայան	Բացարձակ բարձրություն (մ)	ԱՄԻՍ												Sumի
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Գորիս	1398	-0.3	0.2	3.3	8.7	12.8	16.6	19.2	18.7	14.8	10.0	5.5	2.0	9.3
Սիսիան	1615	-4.0	-2.8	1.5	7.1	11.5	15.5	18.3	18.0	14.2	8.6	2.9	-1.7	7.4
Որոտանի լ/ք	2387	-8.5	-7.7	-4.0	1.5	6.7	10.8	13.5	13.7	11.0	5.4	-0.9	-6.0	3.1
Քաջարան	1980	-3.3	-2.9	0.6	5.8	10.4	14.3	17.4	16.8	13.4	8.3	3.2	0.9	7.1
Կապան	704	0.9	2.4	6.5	11.7	16.4	20.9	23.8	23.2	19.0	13.1	7.5	2.9	12.4
Մեղրի	627	2.0	4.1	8.9	14.4	19.2	23.8	26.8	26.2	21.8	15.5	9.6	4.7	14.7

Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ

6. Հարավային ՋԿՏ-ի մթնոլորտային տեղումների ներտարեկան բաշխվածությունը ներկայացված է աղյուսակ 1.2-ում:

Աղյուսակ 1. 2. Հարավային ՋԿՏ-ի մթնոլորտային տեղումների ներտարեկան բաշխվածությունը 1961-2024 թվականներ, մմ

Օդերևութաբանական կայան	Բացարձակ բարձրություն, մ	ԱՄԻՍ												Sumի
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Գորիս	1398	32	42	74	85	111	90	46	41	61	67	47	31	727
Սիսիան	1615	16	24	37	54	70	50	27	15	23	35	24	19	393
Որոտանի լ/ք	2387	46	50	62	82	92	67	46	29	28	56	45	48	657
Քաջարան	1980	44	51	74	84	85	49	23	21	31	52	49	41	593
Կապան	704	27	31	62	71	90	61	30	26	39	50	40	27	553
Մեղրի	627	17	18	32	41	48	26	11	8	13	25	23	16	277

Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ

7. Կայուն ձնածածկույթը ձևավորվում է 1200 մ.ծ.մ. բարձրություններից սկսած և տևում 30-155 օր: Մինչև 1500 մ բարձրություններում այն տևում է 1-1,5 ամիս և 6,5-7 ամիս՝ 3000 մ և ավելի բարձրություններում:

8. Հարավային ՋԿՏ-ի գումարային գոլորշացման հաշվարկային տվյալները ներկայացված են աղյուսակ 1.3-ում:

Աղյուսակ 1. 3. Հարավային ՋԿՏ-ի գումարային գոյորշացման հաշվարկային տվյալները 1961-2024 թվականներ, մմ

Օդերևութաբանական կայան	Բացարձակ բարձրություն, մ	ԱՄԻՍ												Տարի
		I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII	
Գորիս	1398	16	24	33	37	46	55	51	53	49	44	33	18	450
Սիսիան	1615	12	17	24	29	45	51	48	46	41	35	26	13	387
Որոտան լճ	2387	8	9	13	23	37	46	39	35	31	27	16	9	293
Քաջարան	1980	10	11	18	29	43	50	53	56	38	26	21	11	366
Կապան	704	14	17	33	43	51	58	59	60	42	40	23	19	459
Մեղրի	627	19	22	34	48	53	60	62	60	44	41	28	23	494

Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ

1.1.2. Երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը.

9. Հարավային ՋԿՏ-ում տեկտոնական խզվածքները անցնում են Որոտանի հովտի Գորհայքից մինչև Լծեն ընկած հատվածով, Ողջի, Մեղրիգետ և Նոնաձոր գետերի հովիտներով: Այդ խզման հետ են կապված մի շարք աղբյուրների ելքեր (Ջորգոր, Ջույգաղբյուր, Կաթնաղբյուր, Յոթնաղբյուր, Մուխութուրյան, Շաքի և այլն): Հարավային ՋԿՏ-ի գետերի հունային և մերձհունային գոտիներում տարածված են չորրորդականի հասակի ալյուվիալ-պրոլյուվիալ փուխր բեկորային (գետաքար, գլաքար, խիճ, ավազ), գետա-լճային նստվածքները և ավազակավային առաջացումները: Հարավային ՋԿՏ-ում առանձնացվում է ստորերկրյա ջրերի հիմնական 4 ջրատար ստորաբաժանում, որոնք ներկայացված են աղյուսակ 1.4-ում:

Աղյուսակ 1. 4. Հարավային ՋԿՏ-ի հիդրոերկրաբանական կառուցվածքը

Ջրաերկրաբանական կոմպլեքս	Ջրատար ապարների լիթոլոգիական կազմ	Տեղադիրք	Ձևավորող բնաղբյուրներ
1. Ջրատար հրաբխային ապարների կոմպլեքս	ճեղքավոր անդեզիտաբազալտներ, անդեզիտներ, բազալտներ	Տարածված են Որոտան գետի վերին և միջին հոսանքի ավազանի ձախափնյա մասերում: Մեղրիգետի ավազանում տարածումը լոկալ է՝ Տաշտուն, Լիճք, Վանք,	Որոտանի վերին և միջին հոսանքի խոշոր աղբյուրներ՝ Գորհայք՝ 170 լ/վրկ,

Ջրաերկրաբանական կոմպլեքս	Ջրատար ապարների լիթոլոգիական կազմ	Տեղադիրք	Ձևավորվող բնադրյուններ
		Կալեր բնակավայրերի մերձակա տարածքներում:	Սառնակունք՝ 40.5 լ/վրկ, Սպանդարյան՝ 200 լ/վրկ, Անգեղակոթ՝ 40.5 լ/վրկ, Շաքի՝ 1160 լ/վրկ և Վաղատին՝ 243 լ/վրկ: Մեղրիգետում աղբյուրների ծախսը 3-5 լ/վրկ է, երբեմն՝ 8 լ/վրկ:
2. Թույլ ջրատար հրաբխածին, հրաբխածին-նստվածքային և ինտրուզիվ ապարների կոմպլեքս	պորֆիրիտներ, տուֆոավազաքարեր, տուֆոկոնգլոմերատներ, գրանոդիորիտներով, մոնցոնիտներ և դրանց այլ տարատեսակներ	Տարածված են Որոտանի գետավազանի միջին և ստորին հոսանքների աջափնյա հատվածում: Ողջիի և Մեղրիգետի գետավազաններում լուկալ բնույթի են: Տարածված են Ողջի գետի ջրհավաք ավազանի գերակշիռ մասում՝ Մեղրիի, Վարդանաձորի, Ագարակի մերձակա տարածքներում:	Աղբյուրներին բնորոշ է խիստ փոփոխական բնույթի ծախսը՝ մինչև 1 լ/վրկ, ջրի ջերմաստիճանը կազմում է 8-12°C: Որոտանի գետավազանում առկա է շուրջ 251 աղբյուր, Ողջիում՝ 531, իսկ Մեղրիգետում՝ մոտ 40:
3. Ջրատար նստվածքային ապարների կոմպլեքս	կրաքարեր, կրաքարային ավազաքարեր, մերգելներ	Տարածված են Որոտանի գետավազանի Շինուհայր-Տաթև բնակավայրերի շրջակայքում, Ողջիում՝ 2500 մ և ավելի հիպսոմետրիկ նիշերում, իսկ Մեղրիգետում ունեն սահմանափակ տարածում՝ առկա են Մեղրիի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերում:	Աղբյուրներին բնորոշ է ռեժիմի ժամանակավոր կամ փոփոխական բնույթը: Ամռանը ծախսը մինչև 1,0 լ/վրկ է, իսկ գարնանային վարարումների ժամանակ՝ 3-5 լ/վրկ: Որոտանի գետավազանում այդպիսի աղբյուրները 60-ն են, իսկ Ողջիի գետավազանում՝ 43-ը:
4. Գետահովիտների և միջլեռնային գոգավորությունների ալյուվիալ-պրոլյուվիալ և	գետաքար-գլաքարեր, ավազներ, կավավազներ և ավազակավեր	Տարածված են Որոտանի միջին և ստորին հոսանքներում և միջլեռնային գոգավորություններում:	Ստորերկրյա ջրերը սնվում են մակերևութային հոսքից և

Ջրաերկրաբանական կոմպլեքս	Ջրատար ապարների լիթոլոգիական կազմ	Տեղադիրք	Ձևավորվող բնադրյուններ
լճագետային առաջացումների ջրատար հորիզոններ		Մեղրիզետի գետավազանում տարածված են Վարդանիձոր, Ալվանք, Շվանիձոր, Նոնաձոր բնակավայրերի հարակից տարածքներում: Ողջի գետավազանում տարածված են Ողջի գետի ստորին հոսանքում, Գեղի, Գեղանուշ բնակավայրերի և Կապան քաղաքի հարակից տարածքներում:	արմատական ապարներից դրենացվող ջրերից և ձևավորում ենթահունային ջրատար հորիզոններ՝ Սիսիանի, Տոլորսի, Որոտանի և այլն: Աղբյուրներն ունեն 1.5-5 լ/վրկ և ավելի ծախս:

1.1.3. Ջրագրության նկարագրություն.

10. Հարավային ԶԿՏ-ի գետերի ընդհանուր ձևաչափական բնութագրերը ներկայացված են աղյուսակ 1.5-ում:

Աղյուսակ 1. 5. Հարավային ԶԿՏ-ի գետերի ընդհանուր ձևաչափական բնութագրերը

Գետի անուն	Մայր գետ	Ակունքի նիշ, մ	Գետաբերանի նիշ, մ	Երկարություն, կմ	Միջին թեքություն, ‰	Ջրհավաք ավազանի մակերես, կմ ²
Որոտան	Արաքս	3045	720	111*	21	2596.9*
Ծղուկ	Որոտան	3080	1998	26	42	139
Սիսիան	Որոտան	3040	1542	33	45	395
Քաշուն	Որոտան	2250	890	32.3*	-	99.8
Գորիսգետ	Որոտան	3200	820	25*	95	144
Լորաձոր	Որոտան	3180	1340	23	42	12
Տաթև	Որոտան	2850	974	11.3	166	84.2
Շաքի	Որոտան	3363	1623	17.4	100	44
Ողջի	Արաքս	3650	640*	52.0*	58	1240.3*
Գեղի	Ողջի	3260	1265	29.7	67	308.3
Նորաշենիկ	Ողջի	2300	674	26.8	61	130.1
Արծվանիկ	Ողջի	1784	674	17.1	65	46.7
Գեղանուշ (Աջաբաջ)	Ողջի	2850	685	17.0	127	50.1
Վաչագան	Ողջի	2800	765	11.8	172	35.2
Ծավ	Արաքս	2500	650*	27.0*	69	252.1
Մեղրիզետ	Արաքս	3600	513	36	92	336.3
Կարճևան	Արաքս	2350	535	10	192	28.2
Կարավազետ	Արաքս	2050	488	13	161	23.0
Մալև	Արաքս	2650	474	18	148	50.4
Աստղաձոր	Արաքս	2650	451	17	106	35.0

Գետի անուն	Մայր գետ	Ակունքի նիշ, մ	Գետաբերանի նիշ, մ	Երկարություն, կմ	Միջին թեքություն, ‰	Զրիավաք ավազանի մակերես, կմ ²
(Աստազուրգետ)						
Նոնաձոր (Նյուվարի)	Արաքս	2100	412	14	140	53.6
Շավիղ	Արաքս	2050	442	13	146	31.3

* - Հայաստանի տարածքում
Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ

11. Գետային հոսքի 60-85%-ը անցնում է գարնան ժամանակահատվածում (մարտ-հունիս ամիսներին), իսկ ամենաքիչը՝ ձմռան ամիսներին, իսկ ամառ-աշնանային և ձմեռային սակավաջուր փուլերի ընթացքում գետերով անցնում է տարեկան հոսքի 15-40 %-ը (տես՝ աղյուսակ 1.6): Մեղրիգետի գետավազանի Արաքս թափվող փոքր գետերում հոսքը դադարում է:

Աղյուսակ 1. 6. Հարավային ԶԿՏ-ի գետերի բազմամյա միջին տարեկան բնական հոսքի հիմնական բնութագրերը հիդրոլոգիական դիտակետերում

Գետ-դիտակետ	Զրիավաք ավազանի մակերես, կմ ²	Գետային հոսքի					
		մոդուլ /վրկ կմ ²	միջին տարեկան ելք, մ ³ /վրկ	հոսքի ծավալ, մլն. մ ³	սեզոնային բաշխում, %		
					III-VI	VII-X	XI-II
Որոտան-Գորհայք	268	15.1	4.04	127.4	56	28	16
Որոտան-Որոտան	1550	12.1	18.8	593	61	27	12
Որոտան-Տաթև ՀԷԿ	1988	11.5	22.95	723.8	60	27	13
Ծղուկ-Ծղուկ	85.0	18.2	1.55	48.9	68	17	15
Գորիսգետ-Գորիս	65.0	10.2	0.66	20.8	47	35	17
Ողջի - ք. Կապան	710	14.4	10.2	321.7	62	31	8
Գեղի - Կավճուտ	272	18.3	4.98	157.1	59	33	8
Վաչագան-ք. Կապան	35.0	12.0	0.42	13.2	64	20	16
Մեղրիգետ-Մեղրի	274.0	11.8	3.22	101.6	68	21	11

Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ

12. Աղյուսակ 1.7-ում ներկայացված են հարավային ԶԿՏ-ի հիդրոլոգիական դիտակետերում երբևէ դիտված առավելագույն և նվազագույն ելքերի տվյալները:

Աղյուսակ 1. 7. Հարավային ԶԿՏ-ի գետերի դիտված առավելագույն և նվազագույն ելքերը հիդրոլոգիական դիտակետերում, մ³/վրկ

Գետ-դիտակետ	Զրիավաք ավազանի մակերես, կմ ²	Գետային հոսքի	
		առավելագույն ելք	նվազագույն ելք

Գետ-դիտակետ	Ջրհավաք ավազանի մակերես, կմ ²	Գետային հոսքի	
		առավելագույն ելք	նվազագույն ելք
Որոտան-Գորհայք	268	27.2	1.2
Որոտան-Որոտան	1550	300 / 67.2 **	1.83 / 1.3 **
Որոտան-Տաթև ՀԷԿ	1988	1140 / 141 **	0.2 / 1 **
Ծղուկ-Ծղուկ	85.0	46.6	0.071
Սիսիան-Արևիս*	118	49.7	0.17
Լորաձոր-Լծեն*	118	25.3	0.043
Տաթև-Տաթև*	84.2	27.8	0.062
Գորիսգետ-Գորիս	65.0	46.4	0.021
Ողջի - ք. Քաջարան	120	32.4	0.09
Ողջի - ք. Կապան	710	270	0.30
Գեղի – Կավճուտ	272	37.8	0.31
Նորաշենիկ -գ. Նորաշենիկ*	96.0	34.7	0.035
Վաչագան –ք. Կապան	35.0	17.2	0.006
Գեղանուշ-Գեղանուշ*	44.8	21.3	0.004
Ծավ- Ռոզդերե (Ներքին Հանդ)*	252.1	17.1	0.042
Մեղրիգետ-Լիճք*	21.0	7.61	0.01
Մեղրիգետ-Մեղրի	274.0	87.5	0.08
Կարճևան-Ագարակ*	19.0	0.72	0.003
Աստազուրգետ-Շվանիձոր*	32.5	20.2	0.0

* - փակված դիտակետեր, ** - մինչև ջրամբարի կառուցումը / ջրամբարի կառուցումից հետո Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ «Հայիդրոմետ» ՊՈԱԿ

13. Գետերի սնման աղբյուրները ներկայացված են աղյուսակ 1.8-ում:

Աղյուսակ 1. 8. Հարավային ՋԿՏ-ի գետերի սնման աղբյուրները

Գետ - դիտակետ	Ջրհավաք ավազանի մակերես, կմ ²	Սնման աղբյուրներ%		
		հալոցքային	անձրևային	ստորերկրյա
Որոտան-Գորհայք	268	42	12	46
Որոտան-Տաթև ՀԷԿ	1988	33	11	56
Որոտան-Որոտան	1550	39	11	50
Ծղուկ-Ծղուկ	85	50	10	40
Սիսիան-Արևիս*	118	55	13	32
Լորաձոր-Լծեն*	118	52	12	36
Տաթև-Տաթև*	84,2	53	13	34
Գորիսգետ-Գորիս	65	18	12	70
Ողջի - ք. Քաջարան	120	57	20	23
Ողջի - ք. Կապան	710	56	13	31
Գեղի – Կավճուտ	272	53	25	22
Նորաշենիկ -գ. Նորաշենիկ*	96.0	25	36	39
Վաչագան –ք. Կապան	35.0	37	28	35
Գեղանուշ-Գեղանուշ*	44.8	31	32	37
Ծավ- Ռոզդերե (Ներքին Հանդ)*	236.5	36	30	34
Մեղրիգետ-Լիճք*	21.0	51	19	30
Մեղրիգետ-Մեղրի	274.0	50	18	32

Գետ - դիտակետ	Զրհավաք ավազանի մակերես, կմ ²	Սնման աղբյուրներ%		
		հալոցքային	անձրևային	ստորերկրյա
Կարճևան-Ագարակ*	19.0	37	30	33
Աստազուրգետ-Շվանիձոր*	32.5	35	39	26

* - փակված դիտակետեր

Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ

14. Հարավային ԶԿՏ-ի որոշ լճերի ջրաբանական և ջրագրական հիմնական բնութագրիչները ներկայացված են աղյուսակ 1.9-ում:

Աղյուսակ 1. 9. Հարավային ԶԿՏ-ի լճերի ջրաբանական և ջրագրական բնութագրիչները

Լճի անվանում	Գտնվելու վայր	Զրհավաք ավազանի մակերես, կմ ²	Քարձրություն, մ	Առավելագույն խորություն, մ	Միջին խորություն, մ	Երկարություն, մ	Առավելագույն լայնություն, մ	Հայելու մակերես, հա	Ծավալ, մլն. մ ³
Որոտանի գետավազան									
Անտակ	Որոտան գետի աջ վտակ Արիգլիի վերին հոսանքներում	0.18	2335	5.8	1.58	203	122	2.48	0.039
Սև	Գորիս քաղաքից 13 կմ հյուսիս-արևմուտք, Մեծ Իշխանասար լեռից 5 կմ դեպի արևելք	12.0	2658	10.0	4.84	1875	1107	185	8.74
Ալ (Այլախ)	Սառնակունք բնակավայրից 15 կմ դեպի հյուսիս- արևելք	34.2	2984	2.8	1.94	1150	460	52.9	1.02
Ջուլգաղբյուր 1	Սառնակունք բնակավայրից 14 կմ դեպի հյուսիս- արևելք	0.68	3098	2.50	0.85	170	90	1.09	0.010
Ջուլգաղբյուր 2	Սառնակունք բնակավայրից 14 կմ դեպի հյուսիս- արևելք	0.68	3098	2.30	0.49	210	80	1.25	0.006
Քարի լիճ (Ուղտասար)	Ծղուկ լեռից 2 կմ հյուսիս-արևմուտք	0.57	3274	5.0	1.91	235	130	1.42	0.071
Խալաշ	Սառնակունք բնակավայրից 12 կմ դեպի հյուսիս	1.93	3015	12.9	5.30	400	210	6.23	0.326
Ողջի գետավազան									
Գազան	Գեղի գետի վերին հոսանքների Աջաբաջ վտակի ակունքներում, Ջանգեզուրի լեռնաշղթայի արևելյան-հյուսիսարևելյան կողմնադրության մերձգագաթային մասում	2.98	3112	7.7	3.2	400	120	4.8	153.6
Կապուտան	Ողջի գետի Քաջարան վտակի ակունքում, Ջանգեզուրի լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջին	2.70	3286	22	3.6	586	265	13.0	468.0
Ծակքար	Ողջի գետի Ծակքար վտակի	2.46	3272	6.0	3.6	330	102	3.19	112.0

Լճի անվանում	Գտնվելու վայր	Ջրավայր ավազանի մակերես, կմ ²	Բարձրություն, մ	Առավելագույն խորություն, մ	Միջին խորություն, մ	Երկարություն, մ	Առավելագույն լայնություն, մ	Հայելու մակերես, հա	Ծավալ, մ ³
(Սակկար)	ակունքում, Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջին								
Անանուն	Ողջի գետի Քաջարանց վտակի ծախ ճյուղի ակունքում, Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջին	0.28	3550	3.0	0,7	100	50	0,5	3,5
Մեղրիգետի գետավազան									
Գոգի	Մեղրիգետի ակունքում, Լիճք բնակավայրից 8 կմ դեպի արևմուտք	1.30	3290	8	3.40	120	90	10.8	0.037
Խուրջին	Կապուտան լճից 600 մ դեպի հարավ արևելք	0.33	3445	7	3.20	105	85	9	0.029

Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետր» ՊՈԱԿ

15. Հարավային ԶԿՏ-ի խոշոր աղբյուրները ներկայացված են աղյուսակ 1.10-ում:

Աղյուսակ 1. 10. Հարավային ԶԿՏ-ի խոշոր աղբյուրները

Անվանում	Տեղադիրք	Բարձրություն, մ	Ելք, լ/վրկ
Որոտանի գետավազան			
Շաքի	Շաքի բնակավայրից մոտ 1,2 կմ դեպի հարավ	1720	1400
Զոր-Զոր	Վաղատին բնակավայրից մոտ 0,6 կմ դեպի հարավ-արևմուտք	1650	290
Մուխութուրյան	Սառնակունք բնակավայրից 6,5 կմ դեպի հյուսիս	2610	200-280
Ակներ	Գորիսգետի ավազան, Մեծ Իշխանասարի հարավ-արևելյան լանջեր	2050	80-120
Սևաղբյուր	Սիսիան քաղաքից 1 կմ դեպի հյուսիս-արևելք	1650	15
Գորիայք	Գորիայքից 4,8 կմ դեպի հյուսիս-արևմուտք	2070	200
Անգեղակոթ	Անգեղակոթ բնակավայրից 2,7 կմ դեպի հարավ-արևելք	1750	350
Սուրբ (Սրբի)	Անգեղակոթ բնակավայր	-	75
Ուրուտ	Որոտան բնակավայրի հյուսիսային մասում	1400	80
Սիսիան	Սիսիանի արևելյան մասում	1600	25
Սպիտակաջուր	Տանձատափ գյուղից 1,4 կմ հարավ	-	13
Ողջի գետավազան			
Ջրախոր	Կապան քաղաքի արևմտյան ծայրամասում, Ողջի գետի ծախափնյա վտակի ակունքներ	1190	7
Աջաբաջ	Աջաբաջ գետի ակունքներ	2104	200
Վաչագան	Վաչագան բնակավայրից 3 կմ արևմուտք	1630	4
Գեղի	Գեղի բնակավայրից հյուսիս	1550	50


Անվանում	Տեղադիրք	Բարձրություն, մ	Ելք, լ/վրկ
Գյարդ	Գեղի բնակավայրից արևմուտք, Գեղի գետի աջափնյա Գյարդ վտակի ստորին մասում	1650	150
Սուրին կապ	Ողջի գետի միջին հոսանքում, Ներքին Գիրաթաղ բնակավայրից 2 կմ արևելք	1405	25
Չանախչի	Ողջի գետի ձախափնյա Չանախչի վտակի ակունքներում	1325	60
Հալիծոր	Կապան քաղաքի հարավային մասում	977	2.9
Մեղրիգետի գետավազան			
Լիճքի աղբյուրներ	Լիճք բնակավայրից 3,4 կմ հյուսիս-արևմուտք	2350 – 2500	28
Տաշտունի աղբյուրներ	2,5 կմ Տաշտուն բնակավայրից հյուսիս-արևմուտք, 2400 մ բացարձակ նիշում	2400	36
Կալերի աղբյուրներ	Կալեր բնակավայրից 1,7-3,1 կմ հյուսիս-արևելք	2225 – 2750	3.2
Քահրիզ	Նոնաձորի մոտ, ձորում	600	1.4
Քահրիզ	Շվանիծոր բնակավայրում	650	3.9
«Սոսու-Գարան» աղբյուր	Ագարակ քաղաքից 4,5 կմ հյուսիս-արևմուտք	1645	1.3

Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ

1.1.4. Բնական աղետների գոտիներ, այդ թվում՝ սողանքային տարածքներ.

16. Ջրային ռեսուրսների հետ կապված բնական աղետների գոտիների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով և հասանելի է <http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6> հղումով: Հարավային ՋԿՏ-ի հեղեղավտանգ տարածքները ներկայացված են նկար 1,2-ում, ինչպես նաև ամփոփված են ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով և հասանելի է <http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6> հղումով:

Նկար 1.2. Հարավային ՋԿՏ-ի հեղեղավտանգ փարածքները



1.2. Բնակչություն և ժողովրդագրություն.

17. Հարավային ՋԿՏ-ի բնակչություն և ժողովրդագրություն վերաբերյալ ներկայացված տվյալները հիմնվում են ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական՝ www.armstat.am կայքում հրատարակված տվյալների վրա: Հարավային ՋԿՏ-ի բնակչությունը 2020-2023 թվականներին (ՀՀ 2011 թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառման տվյալներով) ըստ տարիների ներկայացված է աղյուսակ 1.10-ում: 2022 թվական հունվարի 1-ի դրությամբ Սյունիքի մարզի քաղաքային բնակչության բաշխվածությունը ներկայացված է աղյուսակ 1.11-ում:

Աղյուսակ 1. 10. Հարավային ՋԿՏ-ի բնակչությունը 2020-2023 թվականներին՝ ըստ տարիների, տարեսկզբին, հազ. մարդ.

Բնակչություն	2020 թվական	2021 թվական	2022 թվական	2023 թվական
Մշտական բնակչություն	137.3	135.8	134.7	134.6
Քաղաքային	93.2	91.8	90.7	90.2
Գյուղական	44.1	44.0	44.0	44.4

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, 2023 թվական <https://armstat.am/file/doc/99542193.pdf>

Աղյուսակ 1. 11. Հարավային ՋԿՏ-ի բնակչության բաշխվածությունը (մարդ)՝ ըստ քաղաքների, 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ

Անվանում	Մշտական բնակչության թվաքանակ
Կապան	41512
Գորիս	19664
Սիսիան	14297
Քաջարան	6810
Մեղրի	4193
Ագարակ	3952
Դաստակերտ	267

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, 2022 թվական <https://armstat.am/file/doc/99533628.pdf>

18. Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի հիմնական վիճակագրական տվյալների՝ հարավային ՋԿՏ-ում 2017-2019 թվականներին բնակչության բնական աճի ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով կազմել է 0.4 -1.1 պրոմիլ, սակայն 2020-2021 թվականներին արձանագրվել է բնակչության բնական նվազում, որի գործակիցը համապատասխանաբար կազմել է -3.3 և -0.9 պրոմիլ:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՐԱՎԱՅԻՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՋՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

2.1. Ջրային հաշվեկշռի հիմնական բաղադրիչների վերլուծություն.

19. Հարավային ՋԿՏ-ի ջրային հաշվեկշռն ըստ գետավազանների կազմվել է 1961-2024 թվականների և 2014-2024 թվականների ժամանակահատվածների համար՝ բազմամյա տարեկան միջին արժեքների հիման վրա: Հարավային ՋԿՏ-ի ջրային հաշվեկշռի տարրերի միջին բազմամյա արժեքներն ըստ գետավազանների ներկայացված են աղյուսակ 2.1-ում:

Աղյուսակ 2. 1. Հարավային ՋԿՏ-ի ջրային հաշվեկշռի տարրերի միջին բազմամյա արժեքներն ըստ գետավազանների՝ 1961-2024 թվականների ժամանակահատվածի համար

Գետավազան	Մակերես, կմ ²	Տեղումներ, մլն. մ ³ մմ	Գոլորշացում, մլն. մ ³ մմ	Գետային հոսք, մլն. մ ³ մմ	Խորքային հոսք, մլն. մ ³ մմ
Որոտան	2596.81	<u>1865.4</u> 718.34	<u>866.1</u> 333.52	<u>764.9</u> 294.55	<u>234.4</u> 90.26
Ողջի	1240.47	<u>917.8</u> 739.88	<u>419.6</u> 338.26	<u>416.5</u> 335.76	<u>81.7</u> 65.86
Մեղրիգետ	660.61	<u>363.4</u>	<u>234.8</u>	<u>124.20</u>	<u>4.40</u>

		550.10	355.43	188.01	6.66
Հարավային ՋԿՏ	4497.89	<u>3146.6</u> 699.57	<u>1520.5</u> 338.05	<u>1305.6</u> 290.27	<u>320.5</u> 71.26

Աղբյուրը՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետր» ՊՈԱԿ

20. Հարավային ՋԿՏ-ի ջրային հաշվեկշիռը կազմվել է նաև վերջին տասնամյակի համար՝ 2014-2024 թվականների բազմամյա տարեկան միջին արժեքների հիման վրա, որոնք ներկայացված են աղյուսակ 2.2-ում:

Աղյուսակ 2. 2. Հարավային ՋԿՏ-ի ջրային հաշվեկշռի տարրերի միջին բազմամյա արժեքներն ըստ գետավազանների՝ 2014-2024 թվականների ժամանակահատվածի համար

Գետավազան	Մակերես, կմ ²	Տեղումներ, մլն. մ ³ մմ	Գոլորշացում, մլն. մ ³ մմ	Գետային հոսք, մլն. մ ³ մմ	Խորքային հոսք, մլն. մ ³ մմ
Որոտան	2596.81	<u>1794.23</u> 690.94	<u>875.44</u> 337.12	<u>697.21</u> 268.49	<u>221.58</u> 85.33
Ողջի	1240.47	<u>885.64</u> 713.96	<u>423.72</u> 341.58	<u>382.43</u> 308.29	<u>79.49</u> 64.08
Մեղրիգետ	660.61	<u>352.89</u> 534.19	<u>238.36</u> 360.82	<u>113.17</u> 171.31	<u>1.36</u> 2.06
Հարավային ՋԿՏ	4497.89	<u>3032.76</u> 674.26	<u>1537.52</u> 341.83	<u>1192.81</u> 265.19	<u>302.43</u> 67.24

Աղբյուրը՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետր» ՊՈԱԿ

21. Հարավային ՋԿՏ-ի 1961-2024 թվականների և 2014-2024 թվականների ջրային հաշվեկշիռների համեմատությունը (2014-2024 թվականների և 1961-2024 թվականների տարբերությամբ) ներկայացված է աղյուսակ 2.3-ում:

Աղյուսակ 2. 3. Հարավային ՋԿՏ-ի 1961-2024 թվական և 2014-2024 թվական ջրային հաշվեկշիռների համեմատությունը (2014-2024 թվականների և 1961-2024 թվականների տարբերությամբ)

	Տեղումներ, մլն. մ ³ մմ	Գոլորշացում, մլն. մ ³ մմ	Գետային հոսք, մլն. մ ³ մմ	Խորքային հոսք, մլն. մ ³ մմ
1961-2024 թթ.	<u>3146.6</u> 699.57	<u>1520.5</u> 338.05	<u>1305.6</u> 290.27	<u>320.5</u> 71.26
2013-2023 թթ.	<u>3032.76</u> 674.26	<u>1537.52</u> 341.83	<u>1192.81</u> 265.19	<u>302.43</u> 67.24
Համեմատություն	<u>-113.84</u> <u>-25.31</u>	<u>+17.02</u> <u>+3.75</u>	<u>-112.79</u> <u>-25.08</u>	<u>-18.07</u> <u>-4.02</u>

Աղբյուրը՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետր» ՊՈԱԿ

22. Հարավային ՋԿՏ-ի 2016-2021 թվականների և 2025-2030 թվականների կառավարման պլաններում ջրային հաշվեկշիռների համեմատությունը ցույց է տալիս, որ 2025-2030 թվականների կառավարման պլաններում հաշվարկված ջրային հաշվեկշռում տեղումները և հոսքը նվազել են, իսկ գումարային գոլորշացումը աճել է: Հարավային ՋԿՏ-ի 2016-2021 թվականների և 2025-2030 թվականների կառավարման պլաններում հաշվարկված ջրային հաշվեկշիռների համեմատական ցուցանիշները (2025-2030 թվականների և 2016-2021 թվականների տարբերությամբ) ներկայացված են աղյուսակ 2.4-ում:

Աղյուսակ 2.4. Հարավային ՋԿՏ-ի 2016-2021 թվականների և 2025-2030 թվականների կառավարման պլաններում հաշվարկված ջրային հաշվեկշիռների համեմատական ցուցանիշները, մլն. մ³

Գետավազան	Որոտան	Ողջի	Մեղրիգետ	Հարավային ՋԿՏ
Տեղումներ	-6.6	-6.2	-1.6	-14.4
Գոլորշացում	+5.1	+10.6	+1.8	+17.5
Բնական գետային հոսքը	-0.1	-12.5	-2.8	-15.4
Խորքային հոսքը	-12.1	-4.3	-0.6	-17.0

Աղբյուրը՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետր» ՊՈԱԿ

ԳԼՈՒԽ 3. ՀԱՐԱՎԱՅԻՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՊԱՇՏԱՐՆԵՐ

23. Հարավային ՋԿՏ-ի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները հաշվարկվել են՝ հիմք ընդունելով 2014-2024 թվական բազմամյա տարեկան միջին արժեքները և ներկայացված են աղյուսակ 3.1-ում:

24. Հարավային ՋԿՏ-ի 2016-2021 թվականների և 2025-2030 թվականների կառավարման պլաններում հաշվարկված օգտագործելի ջրային ռեսուրսների համեմատական ցուցանիշները (2016-2021 թվականների և 2025-2030 թվականների տարբերությամբ) ներկայացված են աղյուսակ 3.2-ում:

Աղյուսակ 3.1. Հարավային ՋԿՏ-ի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները

Գետավազանի ջրային ռեսուրսներ,	Գետավազաններ	Հարավային
-------------------------------	--------------	-----------

մլն. մ ³	Որոտան	Ողջի	Մեղրիգետ	ԶԿՏ
Օգտագործելի ջրային ռեսուրսները				
Մակերևութային հոսք	418.65	205.78	74.56	698.99
Ստորերկրյա հոսք (աղբյուրային)	55.47 *	66.12*	25.95*	147.54*
Ընդամենը	474.12	271.90	100.51	846.53
Ռազմավարական ջրային պաշարը				
Բնական լճերի ծավալի 1/3 մաս	3.2	0.20	0.05	3.45
Զրամբարների մեռյալ ծավալի 2/3 մաս	23.1	2.34	-	25.44
Հաստատված և չհաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները*	111.54**	-	-	111.54
Ընդամենը	137.84	2.54	0.05	140.43
Ազգային ջրային պաշարը				
Բնական լճերի ծավալի 2/3 մաս	4.3	0.5	0.19	4.99
Զրամբարների մեռյալ ծավալի 1/3 մաս	11.6	1.16	-	12.76
Ձնաբծեր և ֆիռնային դաշտեր	-	0.4	0.2	0.6
Ստորերկրյա ջրերի խորքային հոսք	252.17***	-	-	252.17
Ընդամենը	268.07	2.06	0.39	270.52
Էկոլոգիական թողք				
Ընդամենը	223.09	110.53	17.66	351.28

*Ստորերկրյա ջրերի օգտագործելի ռեսուրսները հաշվարկվել են ըստ աղբյուրային հոսքի, որը կազմում է գետի հոսքի մի մասը:

**Հաստատված են համաձայն «Հիդրոլոգիական պայմաններ և Որոտանի գետավազանի ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների հաշվարկ» Ա. Ա. Խաչատրյան, Է. Գ. Խաչատրյան N 0985, 1967 թվական («Гидрологические условия и подсчет эксплуатационных запасов подземных вод бассейна р. Воротан» А. А.Хачатрян, Э. Г.Хачатрян, N 0985, 1967 թվական): Հաշվի առնելով, որ վերջին տասնամյակում գետային հոսքի նվազում է տեղի ունեցել, հաստատված և չհաստատված շահագործական պաշարները նվազեցվել են մոտ 8%-ով:

***Տրվել են՝ համաձայն «Հայկական ԽՍՀ քաղցրահամ ստորերկրյա ջրերի բնական և շահագործական պաշարներ» Հ. Ա. Աղինյան, Ֆ. Մ. Կարապետյան, Վ. Լ. Խալաթյան N 01365, 1976 թվական («Естественные и эксплуатационные ресурсы пресных подземных вод Армянской ССР» О. А. Агинян, Ф. М. Карапетян, В. Л. Халатян N 01365, 1976 թ.):

Հաշվի առնելով, որ վերջին տասնամյակում գետային հոսքի նվազում է տեղի ունեցել, ստորերկրյա ջրերի խորքային հոսքը նվազեցվել է մոտ 8%-ով:

Աղյուսակ 3. 2. Հարավային ՋԿՏ-ի 2016-2021 թվականների և 2025-2030 թվականների կառավարման պլաններում հաշվարկված օգտագործելի ջրային ռեսուրսների համեմատական ցուցանիշներ (2025-2030 թվականների և 2016-2021 թվականների տարբերությամբ)

Օգտագործելի ջրային ռեսուրսները, մլն մ ³	Գետավազանները			Հարավային ՋԿՏ
	Որոտան	Ողջի	Մեղրիգետ	
Մակերևութային հոսքը 2016-2021 թվականներ	618,9	371,1	136,8	1126,8
Մակերևութային հոսքը 2025-2030 թվականներ	418.65	205.78	74.56	698.99
Տարբերությունը	- 200.25	- 165.31	- 62.24	- 427.81
Ստորերկրյա հոսք 2016-2021 թվականներ	62,1	49,4	27,1	138,6
Ստորերկրյա հոսք (աղբյուրային) 2025-2030 թվականներ	55.47	66.12	25.95	147.54
Տարբերությունը	- 6.63	+ 16.72*	-1.15	+ 8.94*

*Ստորերկրյա ջրերի օգտագործելի ռեսուրսների տարբերության դրական արժեքը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2025-2030 թթ. ժամանակահատվածի համար օգտագործելի ռեսուրսների չափաքանակը հաշվարկվել է ըստ աղբյուրային հոսքի, որը կազմում է գետի հոսքի մի մասը, իսկ 2016-2021 թվականների ժամանակահատվածի համար հաշվարկվել են միայն A+B կարգով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները:

ԳԼՈՒԽ 4. ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԶՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄ

4.1. Մակերևութային ջրեր և մակերևութային ջրային մարմինների տարանջատում.

25. Զրային մարմինների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով, հասանելի է <http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6> հղումով:

26. Հարավային ՋԿՏ-ի 2016-2021 թվականների և 2025-2030 թվականների կառավարման պլաններում տարանջատված ջրային մարմինների համեմատական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 4.1-ում:

Աղյուսակ 4.1. Հարավային ՋԿՏ-ի 2016-2021 թվականների և 2025-2030 թվականների կառավարման պլաններում տարանջատված ջրային մարմինների համեմատական ցուցանիշները

Զրային մարմնի տեսակը	Քանակը	Ընդամենը	
Մակերևութային ջրային մարմին 2016-2021 թվականներ	Ռիսկային	30	110
	Խիստ փոփոխված	14	
	Արհեստական	11	
	Ոչ ռիսկային	55	

Ջրային մարմնի տեսակը		Քանակը	Ընդամենը
Մակերևութային ջրային մարմին 2025-2030 թվականներ*	Ռիսկային	31	110
	Խիստ փոփոխված	16	
	Արհեստական	10	
	Ոչ ռիսկային	49	
	Հնարավոր ռիսկային	4	
Ստորերկրյա ջրային մարմիններ 2016-2021 թվականներ		19	
Ստորերկրյա ջրային մարմիններ 2025-2030 թվականներ		19	

*2025-2030 թվականների և 2016-2021 թվականների տարբերությամբ ռիսկային ջրային մարմինների քանակն ավելացել է 1-ով, բացահայտվել է 4 հնարավոր ռիսկային ջրային մարմին, խիստ փոփոխված ջրային մարմինների քանակը ավելացել է 2-ով, արհեստական ջրային մարմինների քանակը կրճատվել է 1-ով, ոչ ռիսկային ջրային մարմինների քանակը կրճատվել է 6-ով:

4.2. Էկոշրջաններ և մակերևութային ջրերի տիպաբանություն.

27. Ջրային մարմինները տարանջատվել են ըստ մակերևութային ջրային մարմինների տեսակների՝ համաձայն Ջրի շրջանակային դիրեկտիվի (ՋՇԴ) II հավելվածի A համակարգում սահմանված նկարագրերի:

4.3. Հարավային ՋԿՏ-ում հղումային տեղանքների սահմանում՝ ըստ տիպերի.

28. Հարավային ՋԿՏ-ի համար առաջարկվող հղումային տարածքները ներկայացված են աղյուսակ 4.2-ում:

Աղյուսակ 4. 2. Առաջարկվող հղումային վայրերը հարավային ՋԿՏ-ում

Գետավազան	Գետի անվանում	Ջրային մարմնի համար	Ջրային մարմնի անվանում	Նշումներ
Որոտան	Որոտան	ՋՄ 6-001	Որոտան գետը մինչև Սպանդարյանի ջրամբար՝ Ուղտիաչք, Ջուխտակն, Միլիցաթոռ և Ղուղիգետ	Գորայք բնակավայրից գետի հոսանքով վերև
Որոտան	Ծղուկ	ՋՄ 6-004	Ծղուկ և Մոխրագետ գետերը՝ մինչև Սպանդարյանի ջրանցք	Ծղուկ գետ
Որոտան	Սիսիան	ՋՄ 6-022	Սիսիան գետն ակունքից մինչև Թասիկ բնակավայր՝ իր Սալվարդ և Գիժգետ վտակներով	Թասիկ բնակավայրից գետի հոսանքով վերև
Ողջի	Ողջի	ՋՄ 6-050	Ողջի գետը մինչև Ուխտապան վտակ՝ Կապուտջուղ և Քաջարանց վտակներով	Քաջարանց վտակ
Ողջի	Գեղի	ՋՄ 6-062	Գեղի գետը՝ ակունքից (Քաղաձոր և Շիկաձոր վտակների հետ) մինչև Գեղանուշ (Աջաբաջ)	Գեղի գետի վերին հոսանքներ

Գետավազան	Գետի անվանում	Ջրային մարմնի համար	Ջրային մարմնի անվանում	Նշումներ
			աջակողմյան վտակի միախառնումը	
Մեղրիգետ	Մեղրիգետ	ՋՄ 6-091	Մեղրիգետը՝ ակունքից մինչև Լիճք բնակավայր	Լիճք բնակավայրից հոսանքով վերև

4.4. Ստորերկրյա ջրեր և ստորերկրյա ջրային մարմինների տարանջատում.

29. Հարավային ԶԿՏ-ում տարանջատված ստորերկրյա ջրային մարմինների, վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով և հասանելի է <http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6> հղումով:

ԳԼՈՒԽ 5. ԷԱԿԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ԶՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1.Շարժիչ ուժեր, ճնշումներ և ազդեցություններ.

30. Շարժիչ ուժերը, դրանց նկարագրությունը, ճնշումները և ազդեցությունները ներկայացված են աղյուսակ N 5.1-ում: Աղյուսակում ներկայացված ճնշումների և ազդեցությունների նկարագրությունը հիմնված է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բազմամյա ժամանակահատվածում հարավային ԶԿՏ-ում իրականացված ստորերկրյա և մակերևութային ջրերի (Որոտան, Ողջի, Մեղրիգետ) որակի ցուցանիշների ամսական կոնցենտրացիաների արժեքների վրա՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թ. N 75-Ն որոշմամբ հաստատված ցանկի:

Աղյուսակ 5. 1. Շարժիչ ուժերը, ճնշումները և ազդեցությունները

Շարժիչ ուժեր	Ճնշումներ և ազդեցություններ	Նկարագրություն
Գյուղատնտեսություն, այդ թվում՝ հողօգտագործում	արտանետվող ազոտի քանակություն	Գյուղատնտեսությունից արտանետվող ազոտի քանակության վերլուծությունը ցույց է տալիս, որ Որոտանի գետավազանի միջին և ստորին հատվածները մեծամասամբ ազդեցություն են կրում գյուղատնտեսական ցրված աղտոտումից: Որոտանի և Գորիսգետի ավազանների ջրի որակի գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ նկատվում է նիտրատ իոնների կոնցենտրացիայի աճ գետերի միջին և ստորին հոսանքներում, որն առաջանում է ավազանի վարելահողերից հետադարձ հոսքերի աղտոտման հետևանքով, հողերի չափից շատ պարարտացնելու ժամանակ:
անասնաբուծություն	արտանետվող ազոտի և ֆոսֆորի քանակություն	Անասնաբուծությունից արտանետումների քանակները մեծ են և էական ճնշում են գործադրում ջրային ռեսուրսների վրա, հիմնականում Գորիսգետի՝ Բոուն բնակավայրից մինչև Քարահունջ, ինչպես նաև Որոտան գետի՝ Սիսիան քաղաքի և Սիսիանից մինչև Շամբի ջրամբար հատվածներում:
գերարածեցում	բուսական ծածկույթի կորուստ, հողի էրոզիա, ինչը նույնպես ճնշում է գործադրում ջրային ռեսուրսների որակի վրա	
ծկնաբուծություն	ծկնաբուծարանները հիմնականում փոքր չափի են (գրադեցնում են մինչև 1 հա տարածք), գտնվում են գետահովիտներում ու ազդեցություն չունեն ջրային ռեսուրսների	

<p>հանքարդյունաբերություն</p>	<p>վրա հանքարդյունաբերական թափոններ, ծանր մետաղներ</p>	<p>Հանքարդյունաբերությունից (գործող, լքված հանքավայրեր և պոչամբարներ) արտահոսքերը մեծ են և էական ճնշում են գործադրում ջրային ռեսուրսների վրա: Հանքարդյունաբերական գործունեությունից առաջացած կեղտաջրերի հեռացումը կենտրոնացված է, և հանքանյութի լվացումից առաջացած պոչանքները խողովակաշարերով հեռացվում են պոչամբարներ: Սակայն պարբերաբար խողովակաշարերի վթարների արդյունքում առաջանում են արտահոսքեր, ինչի հետևանքով կեղտաջրերը անմիջապես թափվում են գետեր և ստորերկրյա ջրաղբյուրներ՝ աղտոտելով դրանք հանքարդյունաբերական թափոններով, ծանր մետաղներով:</p> <p>Գարնանային հորդացումների և ամառային վարարումների ժամանակաշրջանում ձնհալքի և հորդառատ անձրևների հետևանքով հանքավայրերից ձևավորված մակերևութային հոսքաջրերը՝ հագեցած հանքանյութի բարձր պարունակությամբ, լցվում են ջրային ռեսուրսներ: Ամռան չոր ժամանակահատվածում հանքավայրերի տարածքից ծանր մետաղներով հագեցած փոշին քամիների միջոցով տեղափոխվում է մոտակա բնակելի տարածքներ: Շահագործվող պոչամբարների հատակները մեկուսացված չեն, արդյունքում հարակից տարածքն աղտոտված է:</p> <p>Ռեկուլտիվացված կամ չշահագործվող պոչամբարները տարիների ընթացքում ակոսացվել են, ի հայտ են եկել ճեղքվածքներ: Պոչամբարներից ներքև ընկած տարածքներում գտնվում են հողամասեր և այգիներ, որոնց ոռոգումը կատարվում է ծանր մետաղների բարձր պարունակություն ունեցող պոչամբարից զտված ջրերով: Բացի այդ, գյուղատնտեսական կենդանիներն արածում են պոչամբարների շրջակայքում և խմում ծանր մետաղներով աղտոտված պոչամբարի ջուրը՝ արդյունքում վտանգելով կենդանիների և մարդկանց առողջությունը:</p>
<p>աղբավայրեր</p>	<p>աղբավայրերը տեղակայված են մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսներից հեռու և ջրի որակի վրա էական ճնշում չեն գործադրում</p>	
<p>կոշտ թափոններ</p>	<p>բնակավայրերով անցնող գետերի հունը որոշ տեղերում չափազանց աղտոտված է կենցաղային կոշտ թափոններով</p>	<p>Աղտոտված հատվածներն են՝ Որոտան գետը՝ Սիսիան քաղաքի սահմաններում, Սիսիան գետի գետաբերանը՝ Ույծ համայնքի տարածքում, Գորիսգետ գետը՝ Վերիշեն ու Քարահունջ համայնքների միջև, Ողջի գետը՝ Քաջարան և Կապան քաղաքների սահմաններում, Մեղրիգետ գետը՝ Մեղրի քաղաքի տարածքում, Կարճևան գետը՝ Ագարակ քաղաքի տարածքում և մինչև գետաբերան: Նշված հատվածներում կենցաղային կոշտ թափոններն էական ճնշում են գործադրում ջրային ռեսուրսների վրա:</p>

		Ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգի ոչ բավարար դիտացանցի և տվյալների սակավության պատճառով կոշտ թափոնների ճնշման ազդեցությունը ջրավազանի ստորերկրյա ջրային ռեսուրսների որակի վրա գնահատել չի հաջողվել:
զբոսաշրջություն	զբոսաշրջիկների համեմատաբար մեծ թիվ գրանցվում է Տաթևի վանական համալիրում, «Տաթևի թևեր» ճոպանուղիում, սակայն էական ճնշում չի գործադրում ջրավազանի ջրային ռեսուրսների վրա	
տրանսպորտ	հաշվի առնելով այն հանգամանքը, որ ճանապարհների զգալի մասն անցնում է ջրային ռեսուրսներից հեռու գտնվող տարածքներով՝ կարելի է եզրակացնել, որ ավտոմոբիլային տրանսպորտով պայմանավորված աղտոտումը ցրված բնույթի է և էական ճնշում չի գործադրում ջրավազանի ջրային ռեսուրսների որակի վրա	

31. Ապագա ենթակառուցվածքների զարգացման համար ՀՀ կառավարության գործունեության 2021-2026 թվականների ծրագրով Սյունիքի մարզում նախատեսվում են Լիճքի և Խնձորեսկի ջրամբարների կառուցման նախագծահաշվարկային աշխատանքների իրականացման և կառուցման միջոցառումները: Լիճքի ջրամբարի նախագծահաշվարկային աշխատանքներն իրականացվել են 2022-2023 թվականներին և 2026 թվականին նախատեսվում է սկսել Լիճքի ջրամբարի կառուցումը: Հարավային ՋՏԿ-ի նախատեսվող ջրամբարի ցանկը ներկայացված է աղյուսակ 5.2-ում:

Աղյուսակ 5. 2. Հարավային ՋԿՏ-ում նախատեսվող ջրամբարների անվանացանկը

	Ջրամբարի անվանում	Գտնվելու վայր	Ծավալ, մլն. մ ³	Կարգավիճակ
Որոտանի գետավազան				
1	Մուխութությունի	Մուխութության գետի միջին հոսանքներում	2,5	նախագծված
2	Արիգլիի	Արիգլի գետի վրա, Շաղաթ բնակավայրից դեպի հարավ-արևմուտք	5,5	նախատեսվող
3	Թասիկի	Սիսիան գետի վրա, Թասիկ բնակավայրից դեպի հարավ-արևմուտք	11	նախատեսվող
4	Տաթևի	Տաթև գետի վրա, Տաթև բնակավայրից արևմուտք	1,8	նախատեսվող
5	Գորիսի	Վարարակն գետի վրա, Ակներ բնակավայրի մոտ	11	նախատեսվող
6	Բայանդուրի (Վաղատուր)	Բայանդուր գետի վրա, Վաղատուր բնակավայրից արևմուտք	0,45	նախատեսվող
7	Խոզնավար	Խոզնավար գետի վրա, Խոզնավար բնակավայրից արևմուտք	0,36	նախատեսվող
8	Լեռնաշեն	Արիգլի գետի վրա, Շաղաթ բնակավայրից դեպի հարավ-արևմուտք	1	նախատեսվող
9	Խնձորեսկ	Որոտանի գետավազանում՝ Խնձորեսկ բնակավայրի մոտ	5.2	նախատեսվող
Ողջի գետավազան				
1	Ծավ	Ծավ գետի միջին հոսանքներ	1,25	նախագծվող
2	Նորաշենիկ	Նորաշենիկ գետի վրա, Առաջաձոր բնակավայրի մոտ	17,0	նախագծվող
3	Ողջի-1	Ողջի գետի վերին հոսանքներ	13,0	նախատեսվող
4	Ողջի-2	Ողջի գետի միջին հոսանքներ	10,86	նախատեսվող
5	Արծվանիկ	Արծվանիկ գետի վրա	15,18	նախատեսվող
6	Կահուղի	Գեղի գետի վրա, Գետաշեն բնակավայրի մոտ	3,6	նախատեսվող

	Ջրամբարի անվանում	Գտնվելու վայր	Ծավալ, մլն. մ ³	Կարգավիճակ
7	Կաչաղար	Ողջիի գետավազան	8,04	նախատեսվող
8	Գեղանուշ	Գեղանուշ (Աջաբաջ) գետի միջին հոսանքներ	5,0	նախատեսվող
Մեղրիգետի գետավազան				
1	Լիճք	Մեղրիգետի վերին հոսանք, Լիճք բնակավայրից վերև	3,80	նախատեսվող
2	Գյուջի		1,50	նախատեսվող
3	Բողաքար	Մեղրիգետի Բողաքար վտակի վրա	1,30	նախատեսվող, ուսումնասիրված
4	Տաշտուն	Մեղրիգետի Տաշտուն վտակի վրա	0,67	նախատեսվող, ուսումնասիրված
5	Վահրավար	Վահրավար գետի վրա, Վահրավար բնակավայրից վերև	0,90	նախատեսվող, ուսումնասիրված
6	Վանք	Վանք բնակավայրից վերև	0,92	նախատեսվող, ուսումնասիրված
7	Շվանիձոր	Աստղձոր գետի վրա, Շվանիձոր բնակավայրից վերև	1,0	նախատեսվող, ուսումնասիրված
8	Ալդարայ	Մալև գետի վրա, Ալվանք բնակավայրից վերև	0,25	նախատեսվող, ուսումնասիրված
9	Նյուվադ	Նոնաձոր գետի վրա, Նոնաձոր բնակավայրից վերև	1,0	նախատեսվող, ուսումնասիրված
10	Մեղրի	Մեղրի գետի միջին հոսանքներ	0,5	նախատեսվող, չուսումնասիրված

5.2. Աղտոտման կետային աղբյուրներ.

32. Քաղաքային կեղտաջրերի արտահոսքի ծավալներն ըստ ՋԹ-երի ներկայացված են աղյուսակ 5.3-ում:

Աղյուսակ 5.3. Քաղաքային կեղտաջրերի արտահոսքի ծավալները՝ ըստ ՋԹ-երի, Հարավային ՋԿՏ-ում, 2024 թվական

Գետավազան	Օրական ծավալ, հազ. մ ³ /օր	Տարեկան ծավալ, հազ. մ ³ /տարի	Արտահոսքի ծավալը լ/վրկ
Որոտան	7381	2694.1	85.4
Ողջի	16230.7	5924.21	187.8
Մեղրիգետ	1132.27	413.28	13.1
Ընդամենը Հարավային ՋԿՏ-ում	24743.97	9031.59	286.3

Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ, 2025 թվական

33. Ըստ փորձագիտական գնահատականի՝ քաղաքային բնակավայրերից արտանետումների ընդհանուր մասնաբաժինը Ողջիի և Մեղրիգետի գետավազանների դեպքում կազմում է շուրջ 83%, իսկ Որոտանի գետավազանում՝ 50%: Քաղաքային կեղտաջրերի զգալի մասը կոյուղու ցանցով հոսում է անմիջապես հարակից գետը և չի անցնում մաքրում՝ կեղտաջրերի մաքրման կայանների բացակայության պատճառով: Կետային աղբյուրներից քաղաքային կեղտաջրերը էական ճնշում են գործադրում Որոտան գետի՝ Սիսիան քաղաքից մինչև Շամբի ջրամբար, Սիսիան գետի՝ Տոլորսի ջրամբարից մինչև գետաբերան, Գորիսգետի՝ Գորիս քաղաքում, Ողջի գետի՝ Քաջարան և Կապան քաղաքներում, Վաչագան գետի՝ Կապան քաղաքից մինչև գետաբերան, Մեղրիգետի՝ Մեղրի քաղաքից մինչև գետաբերան, Կարճևան գետի՝ Ագարակ քաղաքից մինչև գետաբերան ընկած հատվածները:

34. Հարավային ՋԿՏ-ում սննդի և ոչ սննդի արդյունաբերական կազմակերպությունները փոքր են, հիմնականում կոյուղացված և միացված են բնակավայրերի ջրահեռացման կենտրոնացված համակարգին: Հաշվի առնելով կենցաղային կեղտաջրերի ազդեցության գնահատման արդյունքները, ինչպես նաև Որոտանի, Ողջիի ու Մեղրիգետի գետավազանների համար «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված մակերևութային ու ստորերկրյա ջրային ռեսուրսների 2018-2023 թթ. Մոնիթորինգի տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ սննդի և ոչ սննդի արդյունաբերությունից հեռացվող կեղտաջրերն էական ճնշում չեն գործադրում ջրի որակի վրա:

5.3. Աղտոտման ցրված աղբյուրներ.

35. Ջրային ռեսուրսների ցրված աղտոտման աղբյուրներ են գյուղատնտեսությունը, հանքարդյունաբերությունը, տրանսպորտը, կոշտ թափոնները, որոնց մասին տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 5.1-ում:

5.2.3. Քանակական ճնշումներ. ջրառ և ջրամատակարարման ծառայություններ.

36. Տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների տվյալները 2025 թ. հունվարի դրությամբ ներկայացված են աղյուսակ 5.4-ում: Համաձայն Ջրային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի և 37-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ջրառի և էկոլոգիական թողքի փաստացի չափաքանակները հաշվառելու նպատակով ջրօգտագործման թույլտվության (թույլտվությունների) մեջ ամրագրվում է տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր տեղադրելու պահանջը: Համաձայն Ջրային օրենսգրքի 40-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ջրօգտագործողի կողմից սարքերի տեղադրման վերջնաժամկետ է սահմանված 2024 թվականի հունվարի 1-ը: Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 2207-Ն որոշման համաձայն՝ ջրառի և էկոլոգիական թողքի կետերում տեղադրվող տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր պետք է միացվեն փաստացի ջրառի տվյալների առցանց փոխանցման միասնական հարթակին: Քանակական ճնշումները՝ տարբեր նպատակներով ջրառ և ջրամատակարարում, ներկայացված են աղյուսակ 5.5-ում:

Աղյուսակ 5. 4. Տարեկան ջրօգտագործումն ըստ ոլորտների՝ հարավային ՋԿՏ-ում 2025 թվականի հունվարի դրությամբ մլն մ³/տարի

Գետավազան	Որոտան	Ողջի	Մեղրիգետ	Հարավային ՋԿՏ
Խմելու- կենցաղային	117.49	24.43	8.27	150.19
Ոռոգում	38.47	5.20	9.44	53.11
Արդյունաբերություն	0.04	71.40	0.07	71.51
Ձկնաբուծություն	3.36	0.00	0.00	3.36
Հիդրոէներգետիկա*	2125.39	491.74	53.11	2670.24
Ջրարբիացում	0.01	0.00	0.00	0.01
Ընդամենը ջրառ	2284.76	592.77	70.89	2948.42
Ընդամենը ջրառ՝ առանց	159.76	101.03	17.78	278.18

հիդրոէներգետիկայի				
-------------------	--	--	--	--

Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ, 2025 թվական

Աղյուսակ 5. 5. Քանակական ճնշումները՝ տարբեր նպատակներով ջրառ և ջրամատակարարում

Ջրառի նպատակը	Նկարագրություն	Ընդհանուր ջրառա-ջարկում մասնաբաժինը	Ջրակորուստը	Ճնշումը
Խմելու-կենցաղային	Խմելու ջրագծերի, ջրամատակարարման համակարգերի մոտ 80%-ը 50 և ավելի տարվա են ու մասնակի քայքայված: Ջրամատակարարման համակարգերը հիմնականում չունեն գոտիավորում՝ բացառությամբ Սիսիան քաղաքի: Օրվա կարգավորիչ ջրամբարների (ՕԿՋ) մեծ մասը կարիք ունի վերանորոգման և նոր սարքավորումներով զինման: Անբավարար է խմելու ջրի մաքրման և վարակազերծման սարքավորումների տեխնոլոգիական մակարդակը: Խմելու-կենցաղային ջրամատակարարման համակարգում ջրի կորուստները հանգեցնում են սողանքների և փլուզումների ակտիվացմանը, իսկ ամռան ամիսներին՝ նաև խմելու ջրի սակավությանը:	մոտ 20%	մոտ 60-80%	Չնայած խմելու-կենցաղային նպատակով ջրօգտագործման կորուստների պատճառած տնտեսական վնասներին՝ դրանք չեն խախտում ՋԿՏ-ի ջրային ռեսուրսների էկոլոգիական վիճակը: Խմելու-կենցաղային նպատակով ջրօգտագործումը էական ճնշում չի գործադրում ջրային ռեսուրսների վրա:
Ոռոգում	Ջրառը հիմնականում իրականացվում է «Սյունիք» ԶՕԸ-ի և ինքնասպասարկող բնակավայրերի կողմից: Ոռոգման ենթակառուցվածքները հնամաշ են, բետոնապատ ջրանցքների մեծ մասը մաշվածության պատճառով ունի զգալի ջրակորուստներ, ոռոգման կիրառվող եղանակներն արդիական չեն: Արաքս գետից	մոտ 23%	մոտ 40-50%	Ամառ-աշուն ժամանակահատվածում տեղի է ունենում ոռոգման նպատակով գետերի ջրերի գերօգտագործում, որի արդյունքում Սիսիան և Գորիսգետ գետերի միջին ու ստորին հոսանքներում չի պահպանվում էկոլոգիական թողքը: Ոռոգման նպատակով ջրառն էական

	սնվող 16 ջրհան կայանի ոռոգման ենթակառուցվածքները հնամաշ են: Արաքսի վարարման ժամանակ գետի երկայնքով տեղակայված ջրհան կայանները հաճախակի հեղեղվում և վնասվում են:			ճնշում է գործադրում ջրային ռեսուրսների քանակի վրա Սիսիան գետում՝ Թասիկ բնակավայրից մինչև Տոլորսի ջրամբար, և Գորիսգետում՝ Բռուն բնակավայրից մինչև գետաբերան:
Ձկնաբուծություն	Ջրառն իրականացվում է միայն Որոտանի գետավազանում:	մոտ 0,6 %	-	Քանի որ ձկնաբուծության նպատակով ջրօգտագործումն իրականացվում է միայն Որոտանի գետավազանում, ուստի էական ճնշում չի գործադրում ջրային ռեսուրսների քանակի վրա:
Հանքարդյունաբերություն	Հիմնական ջրառն իրականացվում է Ողջի գետավազանի վերին և ստորին հոսանքներում:	մոտ 54.5%	-	Էկոլոգիական թողքը չի պահպանվում, առկա է ճնշում ջրային ռեսուրսների քանակի վրա:
Հիդրոէներգետիկա	2025 թվականի հունվարի դրությամբ օգտագործվում է Որոտանի գետավազանի գետերի հիդրոէներգետիկ պոտենցիալի մոտ 92%-ը: Փորձագիտական գնահատմամբ՝ Որոտանի գետավազանի գետերի հիդրոէներգետիկ պոտենցիալը գրեթե սպառված է, մնացել է օգտագործելու մոտ 8%: 2025 թ. հունվարի դրությամբ օգտագործվում է Ողջիի գետավազանի գետերի հիդրոէներգետիկ պոտենցիալի մոտ 93%-ը: Ըստ փորձագիտական գնահատման՝ Ողջիի գետավազանում հիդրոէներգետիկ պոտենցիալից մնացել է օգտագործելու մոտ 7%: Մեղրիգետի գետավազանի հիդրոէներգետիկ պոտենցիալը գնահատվել է միայն Մեղրիգետի և Կարճևան գետերի համար: Մեղրիգետից դեպի արևելք ընկած Արաքս գետ թափվող փոքր գետերի հիդրոէներգետիկ	մոտ 90,5%*	-	Ջրավազանում հիդրոէներգետիկ պոտենցիալը կազմում է մոտ 586.3 ՄՎտ, որից օգտագործվում է 517.6 ՄՎտ: Առկա է հիդրոէներգետիկ նպատակով ջրառի ճնշում ջրային ռեսուրսների քանակի վրա:

	պոտենցիալը չի հաշվարկվել՝ պայմանավորված գետերի ժամանակավոր հոսքով: 2025 թ. հունվարին օգտագործվում է Մեղրիգետի գետավազանի գետերի հիդրոէներգետիկ պոտենցիալի մոտ 32.5 %-ը:			
--	---	--	--	--

* հիդրոէներգետիկական համարվում է ոչ սպառողական ջրօգտագործում, ուստի ընդհանուր ջրառաջարկում մասնաբաժինը չի արտացոլվում ընդհանուր ջրառաջարկի հաշվարկներում:

ԳԼՈՒԽ 6. ԳԵՏԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԹՈՂՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

6.1. Հիդրոլոգիական դիտակետերում հաշվարկված էկոլոգիական թողքի արժեքներ.

37. Հարավային ԶԿՏ-ում 2025 թվականի հունվարի դրությամբ գործում է «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ-ի 9 հիդրոլոգիական դիտակետ: Գործող և մի քանի փակված հիդրոլոգիական դիտակետերի էկոլոգիական թողքերի ամսական արժեքները որոշվել են դիտակետերում իրականացված դիտարկումների տվյալների հիման վրա՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 927-Ն որոշման հավելվածի պահանջների: Հարավային ԶԿՏ-ի գործող և փակված հիդրոլոգիական դիտակետերում էկոլոգիական թողքերի ամսական արժեքների հաշվարկային արդյունքները ներկայացված են աղյուսակ 6.1-ում:

Աղյուսակ 6. 1. Հարավային ԶԿՏ-ի գործող և փակված հիդրոլոգիական դիտակետերում էկոլոգիական թողքերի ամսական արժեքների հաշվարկային արդյունքները

Մեղրիգետ-Մեղրի հիդրոլոգիական դիտակետ (38°54'53.62"N և 46°13'52.88"E)												
Ելք մ ³ /վ	Ամիս											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
բազմամյա միջին ամսական	0.93	1.29	3.01	6.99	9.77	9.71	2.70	0.60	0.49	0.56	0.61	0.85
բազմամյա նվազ. միջին ամսական	0.38	0.25	0.78	1.63	2.49	3.73	1.30	0.39	0.39	0.42	0.34	0.42
էկոլոգիական թողք	0.29	0.24	0.42	0.70	0.98	1.39	0.59	0.29	0.29	0.30	0.27	0.30
Մեղրիգետ-Լիճք հիդրոլոգիական դիտակետ, փակված (39° 3'12.96"N և 46°10'29.64"E)												
Ելք մ ³ /վ	Ամիս											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
բազմամյա	0.11	0.13	0.23	0.66	1.51	2.39	1.39	0.50	0.20	0.15	0.14	0.12

միջին ամսական												
ՌՋՄ 6-083. Ողջի գետի ձախակողմյան վտակ Աճանան (Նորաշենիկ) գետը՝ Արծվանիկի պոչամբարի պոչանքի խողովակներից մինչև գետաբերան												
Ելք մ³/վ	Ամիս											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
բազմամյա միջին ամսական	0.37	0.40	1.57	3.82	5.58	3.20	1.17	0.91	0.62	0.56	0.66	0.39
բազմամյա նվազ. միջին ամսական	0.087	0.092	0.34	1.70	1.26	0.46	0.19	0.26	0.18	0.27	0.24	0.17
էկոլոգիական թողք	0.087	0.092	0.17	0.62	0.48	0.22	0.13	0.15	0.12	0.15	0.14	0.12

գ) Մեղրիգետի գետավազան

ՌՋՄ 6-092. Մեղրիգետ գետը՝ Լիճք բնակավայրից մինչև Գոզգոզ վտակի միախառնումը												
Ելք մ³/վ	Ամիս											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
բազմամյա միջին ամսական	0.23	0.27	0.50	1.40	3.20	5.06	2.95	1.06	0.42	0.31	0.30	0.26
բազմամյա նվազ. միջին ամսական	0.050	0.048	0.066	0.36	1.56	2.48	0.53	0.28	0.15	0.083	0.067	0.066
էկոլոգիական թողք	0.038	0.037	0.043	0.14	0.54	0.84	0.20	0.11	0.072	0.049	0.043	0.043

ՌՋՄ 6-098. Մեղրիգետ գետը՝ Թխկուտ և Վարդանիճոր բնակավայրի միջև												
Ելք մ³/վ	Ամիս											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
բազմամյա միջին ամսական	0.75	1.03	2.41	5.60	7.83	7.79	2.16	0.48	0.39	0.45	0.49	0.68
բազմամյա նվազ. միջին ամսական	0.30	0.20	0.63	1.31	2.00	2.99	1.04	0.31	0.31	0.34	0.27	0.34
էկոլոգիական թողք	0.23	0.19	0.34	0.56	0.79	1.11	0.47	0.23	0.23	0.24	0.22	0.24

ՌՋՄ 6-100. Մեղրիգետ գետը՝ Վարդանիճոր բնակավայրից մինչև Մեղրի քաղաք												
Ելք մ³/վ	Ամիս											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12

բազմամյա միջին ամսական	1.01	1.40	3.27	7.59	10.6	10.5	2.93	0.65	0.53	0.61	0.66	0.92
բազմամյա նվազ. միջին ամսական	0.41	0.27	0.85	1.77	2.70	4.05	1.41	0.42	0.42	0.46	0.37	0.46
Էկոլոգիական թողք	0.31	0.26	0.46	0.76	1.06	1.51	0.64	0.31	0.31	0.33	0.29	0.33

ՌՋՄ 6-104. Մեղրիզետ գետը՝ Մեղրի քաղաքից մինչև գետաբերան												
Ելք մ ³ /վ	Ամիս											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
բազմամյա միջին ամսական	1.13	1.56	3.65	8.47	11.8	11.8	3.27	0.73	0.59	0.68	0.74	1.03
բազմամյա նվազ. միջին ամսական	0.46	0.30	0.95	1.98	3.02	4.52	1.58	0.47	0.47	0.51	0.41	0.51
Էկոլոգիական թողք	0.35	0.29	0.51	0.85	1.19	1.68	0.72	0.35	0.35	0.36	0.33	0.36

ՌՋՄ 6-106. Կարճևան գետը՝ Կարճևան բնակավայրից մինչև Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ												
Ելք մ ³ /վ	Ամիս											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
բազմամյա միջին ամսական	0.07 2	0.08 3	0.15	0.43	0.98	1.55	0.90	0.32	0.13	0.10	0.09 1	0.08
բազմամյա նվազ. միջին ամսական	0.01 5	0.01 5	0.02	0.11	0.48	0.76	0.16	0.08 6	0.04 7	0.02 5	0.02	0.02
Էկոլոգիական թողք	0.012	0.011	0.01 3	0.04 3	0.16	0.26	0.06	0.03 5	0.02 2	0.01 5	0.01 3	0.01 3

ՌՋՄ 6-107. Կարճևան գետը՝ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատից մինչև գետաբերան												
Ելք մ ³ /վ	Ամիս											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
բազմամյա միջին ամսական	0.11	0.13	0.23	0.66	1.51	2.3 9	1.39	0.50	0.20	0.15	0.14	0.12
բազմամյա նվազ. միջին ամսական	0.02 4	0.02 3	0.03 1	0.17	0.7 4	1.17	0.25	0.13	0.07 2	0.03 9	0.03 2	0.031
Էկոլոգիական թողք	0.01 8	0.01 7	0.02 0	0.06 6	0.2 5	0.4 0	0.09 3	0.05 4	0.03 4	0.02 3	0.02 0	0.020

42. Էկոլոգիական թողքի ամսական ելքերի արժեքների հաշվարկային սխալանքը կազմում է $\pm 10\%$:

ԳԼՈՒԽ 7. ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ

7.1. Խմելու ջրի ջրհավաք տարածքներ.

43. Հարավային ՋԿՏ-ում առկա է 550-ից ավելի աղբյուր, որոնցից ըստ փորձագիտական գնահատման՝ առանձնացվել են խմելու ջրի աղբյուրների խմբերի 26 տեղամաս՝ շուրջ 9.97 կմ² ընդհանուր տարածքով: Խմելու ջրի ջրհավաք տարածքները հարավային ՋԿՏ-ում ներկայացված են աղյուսակ 7.1-ում:

Աղյուսակ 7. 1. Խմելու ջրի ջրհավաք տարածքները հարավային ՋԿՏ-ում

h/h	Աղբյուրների խմբի անվանումը	Ջրհավաքի մակերեսը, մ ²
1	Սանդախլու	129603
2	Աղիտու	29820
3	Վահրավառ	1233470
4	Գյարդի	693241
5	Փխրուտ (Փուխրուտ)	106229
6	Կարճևան	511437
7	Մեղրիգետի	765056
8	Քաղքարի գլուխ	1087031
9	Շաքի	85087
10	Յուղոտ	29828
11	Բողաքարի	1456667
12	Այրիգետի	240699
13	Շիշկերտ	263040
14	Անանուն	130842
15	Գեղի	200350
16	Շոր-Շորի	492420
17	Քաղարձավատակ	30400
18	Մուխութության	572965
19	Ակներ	1101610
20	Ջվար	5671
21	Սև աղբյուր	47018
22	Անապատի	412671
23	Սուրինկափ	7669
24	Կաթնաղբյուր	6286
25	Մուխութությանի աղբյուրներ	258645
26	Յոթ աղբյուր	69217

Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ ՋՌԿՎ Ջրային ռեսուրսների պետական կադաստր և ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե

7.2. Բնության հատուկ պահպանվող տարածքներ.

44. Բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով, հասանելի է <http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6> հղումով:

45. Շաքիի ջրվեժը գտնվում է Որոտանի կիրճում՝ Որոտանի ձախակողմյան Շաքի վտակի վրա: «Սատանի կամուրջը» գտնվում է Որոտան գետի վրա, և նրա առանձին փոսերում բխում են տաք հանքային աղբյուրներ:

46. «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Շիկահող» պետական արգելոցը 12137 հա մակերեսով ընդգրկում է Ծավի և Շիկահողի գետավազանները, «Արևիք» ազգային պարկը ընդգրկում է Մեղրիգետ, Նոնաձոր և Շվանիձոր գետերի վերին և միջին հոսանքները, և պարկի տարածքը կազմում է 31211.19 հա: «Սև լիճ» արգելավայրը գտնվում է Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասար մերձգագաթային հատվածում, մակերեսը կազմում է 240 հա: «Գորիսի» պետական արգելավայրը զբաղեցնում է 1850 հա տարածք, գտնվում է Որոտան գետի Վարարակն վտակի ավազանում: «Զանգեզուր» արգելավայրի տարածքը 25711,6 հա է և տարածվում է Բարգուշատի լեռնաշղթայի հարավային ու Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի վրա: «Սոսու պուրակ» արգելավայրի տարածքը գտնվում է Ծավի գետավազանում և զբաղեցնում է 64,2 հա մակերես: «Խուստուփ» արգելավայրը զբաղեցնում է 6946,74 հա և ընդգրկում է Մեղրի լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնազանգվածի բարձր լեռնային հատվածը: «Բողաքար» արգելավայրը գտնվում է «Արևիք» ազգային պարկում և զբաղեցնում է 2728 հա:

7.3. Ռեկրեացիոն տարածքներ.

47. Սյունիքի մարզի ռեկրեացիոն գոտիները և բնական ջրագրական հուշարձաններն են՝ «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային

պարկի ռեկրեացիոն գոտին, Գազանան («Զանգեզուր» արգելավայր), Կապույտ լճերը («Արևիք» ազգային պարկ), «Սատանի կամուրջ» բնական կամուրջը, «Ջրաղացի» աղբյուրները, «Ծործոր» աղբյուրները, «Շաքիի» ջրվեժը, Սբ. Վարդան եկեղեցու քարայր կացարանի և աղբյուրի համալիրը, «Կապուտջուղ» ջրվեժները, «Կապուտան» (Գոգի) լիճը, «Ծաղկարի» լիճը, «Անապատի» աղբյուրը, «Սմբուլի» աղբյուրը, «Վարդանաձորի» աղբյուրները, Դավիթ Բեկի ջրամբարը, Տոլորսի ջրամբարը, Շամբի ջրամբարը, Կարճևանի ջրվեժը, Բողաքարի ջրվեժը և Լիճքի ջրվեժները, Ողջի գետի վրա Քաջարան բնակավայրի մոտ Թթուջուր աղբյուրը և Սիսիան գետի ափը՝ Աշոտավան բնակավայրի մոտ:

7.4. Նիտրատներից խոցելի տարածքներ.

48. Համաձայն գնահատման արդյունքների՝ նորմատիվային արժեքը պարբերաբար գերազանցվել է՝ Որոտանի գետավազանի N1175 (բն. Անգեղակոթ) և N 537 (բն. Սպանդարյան) դիտահորերում (տես՝ նկար 7.1): Հարավային ԶԿՏ-ում ԵՄ Նիտրատների դիրեկտիվով սահմանված արժեքի (50 մգ/լ) գերազանցման ոչ մի դեպք չի գրանցվել: Նիտրատների խոցելի տարածքների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով, հասանելի է <http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6> հղումով:

ԳԼՈՒԽ 8. ԶՐԱԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀՈՍՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԶՐԱՊԱՀՊԱՆ ԳՈՏԻՆԵՐ, ԷԿՈՏՈՆ ԵՎ ԱՆՕՏԱՐԵԼԻ ԳՈՏԻՆԵՐ

49. **Սանիտարական պահպանման տարածքներ:** Հարավային ԶԿՏ-ում աղբյուրների և ՕԿԶ-ների համար առանձնացվել է ջրաէկոհամակարգերի 79 սանիտարական պահպանման տարածք՝ 2.01 կմ² ընդհանուր մակերեսով և կազմում է հարավային ԶԿՏ-ի ընդհանուր մակերեսի մոտ 0.045 %-ը:

50. **Հոսքի ձևավորման տարածքներ:** Հարավային ՋԿՏ-ում տարանջատվել է 112 հոսքի ձևավորման տարածք՝ 929.14 կմ² ընդհանուր մակերեսով, որը կազմում է հարավային ՋԿՏ-ի 20.7%-ը:

51. **Ստորերկրյա ջրերի պահպանման տարածքներ:** Հարավային ՋԿՏ-ում 121 հորատանցքի և 472 աղբյուրի համար առանձնացվել են ստորերկրյա ջրերի պահպանման տարածքներ՝ 38.69 կմ² ընդհանուր մակերեսով, որը կազմում է հարավային ՋԿՏ ընդհանուր մակերեսի մոտ 0.86 %-ը:

52. **Ջրապահպան գոտիներ:** Հարավային ՋԿՏ-ում ջրապահպան գոտու մակերեսը կազմում է 31.89 կմ² և կազմում է հարավային ՋԿՏ-ի մոտ 0.71 %-ը:

53. **Էկոտոն:** Հարավային ՋԿՏ-ում առանձնացվել է գետերի 11 էկոտոնի տարածք՝ 1.711 կմ² ընդհանուր մակերեսով, ինչը կազմում է հարավային ՋԿՏ ընդհանուր մակերեսի մոտ 0.038 %-ը:

54. **Անօտարելի գոտիներ:** Հարավային ՋԿՏ-ում 11 ջրանցքի երկայնքով առանձնացվել են 10 մ լայնությամբ անօտարելի տարածքներ: 6 խոշոր ջրամբարի պատվարների համար անօտարելի գոտին սահմանվել է 100 մ: Անօտարելի գոտիների ընդհանուր մակերեսը կազմում է 3.277 կմ² և կազմում է հարավային ՋԿՏ-ի մոտ 0.073 %-ը:

55. Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանման տարածքների, ջրապահպան գոտիների, էկոտոնի և անօտարելի գոտիների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով, հասանելի է <http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6> հղումով:

ԳԼՈՒԽ 9. ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԶՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

9.1. Մոնիթորինգի գործող դիտացանց.

56. Մակերևութային և ստորերկրյա ջրերի քանակի և որակի մոնիթորինգն իրականացնում է ՇՄՆ «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ը: Հարավային ԶԿՏ-ում 2025 թվական հունվարի 1-ի դրությամբ հիդրոլոգիական մոնիթորինգ իրականացվում է Որոտան, Ողջի, Մեղրիգետ գետերի և դրանց վտակների վրա (տես՝ նկար 9.1): Գործող դիտակետերից 11-ը գործառնական են, 6-ը՝ հղումային, 2-ը՝ հսկողական և 2-ը՝ աղտոտիչների տեղափոխման (Արաքս գետի վրա): Հարավային ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի մոնիթորինգն իրականացվում է 2010 թվականից 7 դիտակետում, որից 4-ում իրականացվում է նաև ջրի որակի մոնիթորինգ:

9.2. Մակերևութային ջրային մարմինների կարգավիճակի գնահատում.

57. Հիդրոլոգիական տեսանկյունից մակերևութային ջրային մարմինների էկոլոգիական կարգավիճակը գնահատելու նպատակով հիդրոլոգիական դիտակետում ջրի փաստացի դիտված ելքերը համեմատվել են էկոլոգիական թողքի հաշվարկված արժեքների հետ: Հարավային ԶԿՏ-ում մակերևութային ջրային մարմինների կարգավիճակը, ըստ էկոլոգիական թողքի պահպանման կարգավիճակի, տրված է Աղյուսակ 9.1-ում: Մակերևութային ջրերի քիմիական կարգավիճակի գնահատումն իրականացվել է 19 դիտակետի համար՝ ըստ ՀՀ ՇՄՆ «Հայիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված թթվածնի և հանքայնացման ռեժիմների, կենսածին տարրերի, մետաղների 2016-2024 թթ. տարեկան միջին կոնցենտրացիաների արժեքների: Հարավային ԶԿՏ-ի մոնիթորինգի գործող դիտակետերի և քիմիական կարգավիճակի գնահատականի ցանկը ներկայացված է աղյուսակ 9.2-ում:

Աղյուսակ 9. 1. Հարավային ԶԿՏ-ում տարանջատված մակերևութային ջրային մարմիններում էկոլոգիական թողքի պահպանման կարգավիճակը՝ ըստ գործող հիդրոլոգիական դիտակետերի

№	Գետ-Դիտակետ	Ջրային մարմնի համար	Էկոլոգիական թողքի
---	-------------	---------------------	-------------------

			պահպանման կարգավիճակ
1	Մեղրիգետ-Մեղրի	ՌՋՄ 6-100	Չի պահպանվում
2	Ողջի-Քաջարան	ՌՋՄ 6-052	Չի պահպանվում
3	Ողջի-Կապան	ՌՋՄ 6-078	Չի պահպանվում
4	Գեղի-Կավճուտ	ՀՋՄ 6-070	Չի պահպանվում
5	Վաչագան-Կապան	ՌՋՄ 6-077	Չի պահպանվում
6	Որոտան-Գորայք	ՋՄ 6-001	Պահպանվում է
7	Որոտան-Որոտան	ՌՋՄ 6-032	Չի պահպանվում
8	Որոտան-Տաթև ՀԷԿ	ՌՋՄ 6-035	Պահպանվում է
9	Ծղուկ-Ծղուկ	ՌՋՄ 6-008	Չի պահպանվում
10	Գորիսգետ-Գորիս	ՌՋՄ 6-043	Պահպանվում է

Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ, 2023-2025 թվական

Աղյուսակ 9. 2. Հարավային ՋԿՏ-ի մոնիթորինգի գործող դիտակետերի քիմիական կարգավիճակը

Գետ	Դիտակետի տեղադիրքը և համար	Ջրային մարմնի համար	Ջրի որակի նորմ	Ջրի որակի նորմ պայմանավորող ցուցանիշներ	Ջրի որակի վրա ճնշման հիմնական գործոններ
Որոտան	0,5 կմ Գորիայքից վերև, N99	ՋՄ 6-001	Միջին (III)	մանգան (III)	գյուղատնտեսությունից հետադարձ հոսքեր
	1 կմ Սիսիանից վերև, N100	ՋՄ 6-019	Միջին (III)	մոլիբդեն, մանգան, վանադիում (III)	կենցաղային կեղտաջրերի հեռացման չկենտրոնացված աղբյուրներ, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքեր
	2 կմ Սիսիանից ներքև, N101	ՌՋՄ 6-032	Անբավարար (IV)	ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, վանադիում, երկաթ, բարիում, ընդհանուր ֆոսֆոր, ԿՉՆ (III), մանգան (IV)	կոմունալ-կենցաղային կեղտաջրեր, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքեր
	0,5 կմ Տաթև ՀԷԿ-ից ներքև, N102	ՌՋՄ 6-035	Անբավարար (IV)	մոլիբդեն, մանգան, երկաթ, բարիում (III), սուլֆատ իոն (IV)	կոմունալ-կենցաղային կեղտաջրեր, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքեր
Սիսիան	0,5 կմ Արևիսից վերև, N103	ՋՄ 6-022	Անբավարար (IV)	երկաթ (III) Ալյումին (IV)	Կենցաղային կեղտաջրերի հեռացման չկենտրոնացված աղբյուրներ, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքեր

Գետ	Դիտակետի տեղադրիչը և համար	Ջրային մարմնի համար	Ջրի որակի նորմ	Ջրի որակի նորմ պայմանավորող ցուցանիշներ	Ջրի որակի վրա ճնշման հիմնական գործոններ
	գետաբերանի մոտ, N104	ՌՋՄ 6-031	Վատ (V)	մանգան, վանադիում, երկաթ (III), մոլիբդեն (V)	կոմունալ-կենցաղային կեղտաջրեր, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքեր
Վարարակն (Գորիսգետ)	3 կմ Գորիսից վերև, N106	ՌՋՄ 6-043	Անբավարար (IV)	ամոնիում իոն, կոբալտ, ծարիր, ընդհանուր ֆոսֆոր (III) մանգան, երկաթ, ալյումին (IV)	կենցաղային կեղտաջրերի հեռացման չկենտրոնացված աղբյուրներ, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքեր
	1,5 կմ Գորիսից ներքև, N107	ՌՋՄ 6-044	Վատ (V)	մոլիբդեն, մանգան, կոբալտ, երկաթ, կալցիում, ԿՉՆ (III), նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր (IV) Ամոնիում իոն (V)	կոմունալ-կենցաղային կեղտաջրեր, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքեր
Ողջի	1,7 կմ ք. Քաջարանից վերև, N91	ՋՄ 6-050	Լավ (II)	-	ոչ էական ճնշում
	1,8 կմ ք. Քաջարանից ներքև, N92	ՌՋՄ 6-052	Վատ (V)	ֆոսֆատ իոն, կոբալտ, երկաթ, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն, ԿՆ (III), մոլիբդեն, մանգան, ալյումին (IV), ամոնիում իոն(V)	կոմունալ-կենցաղային կեղտաջրեր, հանքարդյունաբերական հոսքաջրեր
	0,8 կմ ք. Կապանից վերև, N93	ՌՋՄ 6-072	Միջին (III)	մոլիբդեն, կոբալտ, երկաթ, ալյումին (III)	կենցաղային կեղտաջրերի հեռացման չկենտրոնացված աղբյուրներ, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքեր, հանքարդյունաբերական հոսքաջրեր
	6,8 կմ ք. Կապանից ներքև, N94	ՌՋՄ 6-078	Վատ (V)	երկաթ, ալյումին, ցինկ (IV), պղինձ, մանգան, կոբալտ (V)	կոմունալ-կենցաղային կեղտաջրեր, հանքարդյունաբերական հոսքաջրեր
Գեղի	0.5 կմ գյ. Աջարաջից	ՋՄ 6-062	Լավ (II)	-	ոչ էական ճնշում

Գետ	Դիտակետի տեղադրիչը և համար	Ջրային մարմնի համար	Ջրի որակի նորմ	Ջրի որակի նորմ պայմանավորող ցուցանիշներ	Ջրի որակի վրա ճնշման հիմնական գործոններ
	վերև, N97				
	գետաբերանի մոտ, N98	ՀՌՋՄ 6-071	Միջին (III)	մանգան, երկաթ (III)	հանքարդյունաբերական հոսքաջրեր
Աճանան (Նորաշենիկ)	3 կմ գյ. Աճանանից վերև, N346	ՌՋՄ 6-083	Վատ (V)	ամոնիում իոն, կոբալտ, երկաթ, ԿՉՆ (III), ալյումին (IV), վանադիում (V)	հանքարդյունաբերական հոսքաջրեր
	գետաբերան, N347	ՌՋՄ 6-083	Վատ (V)	ամոնիում իոն, բարիում, նատրիում, ծարիր (III), Նիտրիտ իոն, ցինկ, կադմիում, երկաթ, կալցիում, ալյումին, ԸԼԱ (IV), մոլիբդեն, մանգան, վանադիում, կոբալտ, սուլֆատ իոն (V)	կոմունալ-կենցաղային կեղտաջրեր, հանքարդյունաբերական հոսքաջրեր
Մեղրիգետ	Մեղրի քաղաքից 0,5կմ վերև, N89	ՌՋՄ 6-100	Վատ (V)	Կոբալտ, երկաթ (III) ալյումին (IV) մանգան (V)	հանքարդյունաբերական հոսքաջրեր
	գետաբերանի մոտ, N90	ՌՋՄ 6-104	Անբավարար (IV)	կոբալտ, երկաթ (III), ալյումին, մանգան (IV)	հանքարդյունաբերական հոսքաջրեր
Կարճևան	գետաբերանի մոտ, N344	ՌՋՄ 6-107	Վատ (V)	պղինձ, արսեն, սելեն, ծարիր, քլորիդ իոն (III) երկաթ, մանգան, բերիլիում, բոր, ալյումին, ԸԼԱ (IV), ԹԿՊ5, ամոնիում, սուլֆատ իոններ, մոլիբդեն, վանադիում, կոբալտ, կալիում, նատրիում, ԸԼԱ (V)	հանքարդյունաբերական հոսքաջրեր

Աղբյուրը՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետր» ՊՈԱԿ, 2022-2024 թվական

9.3. Ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի գնահատում.

58. Հարավային ԶԿՏ-ում ստորերկրյա ջրերի կարգավիճակը որոշվել է 7 հիդրո-երկրաբանական մոնիթորինգի դիտակետի տվյալներով: Ստորերկրյա ջրերի մոնի-

թորինգի 2016-2025 թվականների արդյունքների համաձայն՝ քանակական տատանումները մոտ են բնականին, և ներկայումս մարդածին ճնշումների ազդեցությունը ստորերկրյա ջրերի քանակի վրա էական չէ: Համաձայն գնահատման արդյունքների՝ նիտրատների պարունակության համար արժեքը պարբերաբար գերազանցվել է Որոտանի գետավազանում՝ Անգեղակոթ բնակավայրի մոտ՝ N 1175 դիտահոր (ՍՋՄ 6-01), Սպանդարյան բնակավայրի մոտ՝ N 537 դիտահոր (ՍՋՄ 6-01):

59. Ջրի որակի մոնիթորինգի գոյություն ունեցող տվյալները բավարար չեն հարավային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրային մարմինների քիմիական կարգավիճակի գնահատման համար: Անհրաժեշտ են ստորերկրյա ջրերի վերաբերյալ լրացուցիչ տվյալներ՝ ընդլայնված մոնիթորինգի դիտացանցի և առավել շատ ջրաքիմիական ցուցանիշների պայմաններում, որոնք կներառեն թունաքիմիկատները և քիմիական սինթետիկ այլ նյութերը:

ԳԼՈՒԽ 10. ՋՐԱՎԱԶԱՆԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

10.1. Հարավային ՋԿՏ-ում կլիմայի փոփոխության միտումները.

60. Հարավային ՋԿՏ-ում կլիմայական տարրերի փոփոխության միտումները գնահատելու համար օգտագործվել են ջրավազանում գործող 6 օդերևութաբանական կայանի՝ Որոտանի լեռնանցք, Գորիս, Սիսիան, Քաջարան, Կապան և Մեղրի, օդի ջերմաստիճանի և տեղումների դիտարկումների տվյալների շարքերը: Վերլուծվել են նշված տարրերի տարեկան և սեզոնային քանակական շեղումները 1991-2022 թվականների Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՀՕԿ) կողմից ընդունված բազիսային ժամանակահատվածի՝ 1961-1990 թվականների միջինի նկատմամբ:

10.2. Ջրավազանի մակերևութային հոսքի վրա կլիմայի փոփոխության ազդեցություն.

61. Գետային հոսքի կանխատեսվող փոփոխությունները ներկայացված են աղյուսակ 10.1-ում և աղյուսակ 10.2-ում:

Աղյուսակ 10. 1. Գետային հոսքի կանխատեսվող փոփոխությունները բազիսայինի նկատմամբ, %

Գետ - դիտակետ	ԿՓ մոդել, սցենար								
	CCSM4, RCP6.0			CCSM4, RCP8.5			METRAS, RCP8.5		
	2040	2070	2100	2040	2070	2100	2040	2070	2100
Որոտանի գետավազան									
Որոտան - Գորայք	6	7.2	10	5.4	10.9	13.2	2.9	6.2	9.1
Ծղուկ - Ծղուկ	6.2	7.5	10.4	5.6	11.3	13.7	3	6.5	9.5
Սիսիան - Արևիս	6.2	8.9	11.8	7.1	11.9	19.1	7.4	15.2	21.5
Լորաձոր - Լձեն	-3	-3.3	-4.7	-2.4	-5.3	-5.4	-0.5	-1.3	-2
Որոտան - Որոտան	-8.6	-12.3	-16.4	-9.8	-16.5	-26.4	-10.2	-20.8	-29.4
Որոտան - Տաթև ՀԷԿ	-6.3	-9.1	-12	-7.2	-12	-19.5	-7.7	-15.7	-22.2
Գորիսգետ - Գորիս	8.8	11.7	15.8	9.1	16.5	23.4	7.5	15.5	22.1
Ողջի գետավազան									
Ողջի - Քաջարան	-17.5	-24.7	-32.9	-19.6	-33.3	-52.3	-19.7	-40.4	-57.2
Գեղի - Գեղի	1.9	1.4	2.3	0.8	3.2	0.7	-2	-3.7	-4.9
Վաչագան - Կապան	-14.7	-20.3	-27.3	-16	-27.9	-42.3	-15.2	-31.1	-44.2
Գեղանուշ - Գեղանուշ	-16	-23.2	-30.7	-18.5	-30.7	-50.2	-20	-40.8	-57.6
Ողջի - Կապան	-13.8	-19.2	-25.7	-15.1	-26.1	-40.1	-14.6	-30	-42.5
Մեղրիգետի գետավազան									
Մեղրիգետ - Մեղրի	-19.1	-27.3	-36.3	-21.7	-36.5	-58.4	-22.6	-46.2	-65.3
Մեղրիգետ - Լիճք	-16.8	-23.4	-31.3	-18.5	-31.9	-49	-17.8	-36.6	-51.9

Աղբյուր՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ, 2025 թ.

Աղյուսակ 10. 2. Գետային հոսքի կանխատեսումը 2025-2030 թվականներ, 2040, 2070, 2100 թվականների համար՝ համաձայն ԿՓՓՄԽ RCP8.5 սցենարի (METRAS մոդել)

Գետ- դիտակետ	Գետային հոսքը	Բնական հոսքի կանխատեսումներ, մլն. մ ³
--------------	---------------	--

	մլն. մ³	Կարճաժամկետ՝ հաջորդ 6 տարվա համար ըստ ՋԿՊ ցիկլի						Երկարաժամկետ		
		2025	2026	2027	2028	2029	2030	2040	2070	2100
Որոտանի գետավազան										
Որոտան-Գորհայք	134.4	141.2	141.3	141.4	141.4	141.5	141.6	142.4	146.8	150.7
Ծղուկ-Ծղուկ	45.73	45.93	45.93	46.03	46.03	46.13	46.13	46.63	49.43	51.83
Սիսիան-Արևիս	56.70	56.80	56.80	56.80	56.90	56.90	56.90	57.30	59.20	60.80
Լորաձոր-Լճեն	30.17	30.17	30.17	30.17	30.17	30.17	30.17	30.17	30.07	29.97
Որոտան-Որոտան	171.1	167.3	166.0	164.7	163.1	161.4	160.2	156.4	150.1	143.1
Որոտան-Տաթև ՀԷԿ	534.0	530.6	529.4	528.3	527.2	526.1	525.0	500.3	485.4	469.9
Գորիսգետ-Գորիս	18.47	18.57	18.57	18.67	18.67	18.67	18.67	18.97	20.37	21.47
Ողջի գետավազան										
Ողջի-Քաջարան	106.0	104.6	104.2	103.7	103.2	102.7	102.2	87.4	79.8	71.1
Գեղի-Գեղի	123.6	123.5	123.5	123.5	123.5	123.4	123.4	123.3	118.4	116.6
Վաչագան-Կապան	13.56	13.36	13.36	13.26	13.26	13.16	13.16	11.57	10.81	9.86
Գեղանուշ-Գեղանուշ	13.88	13.68	13.58	13.48	13.38	13.28	13.18	11.66	10.66	9.62
Ողջի-Կապան	267.5	264.3	2632	262.1	261.0	259.9	258.8	230.5	216.1	198.7
Մեղրիգետի գետավազան										
Մեղրիգետ-Մեղրի	98.72	97.32	96.82	96.42	96.02	95.62	95.22	79.9	71.76	62.88
Մեղրիգետ-Լիճք	19.87	19.67	19.57	19.47	19.37	19.27	19.17	16.53	15.22	13.65

Աղբյուրը՝ ՀՀ ՇՄՆ «Հայհիդրոմետ» ՊՈԱԿ, 2025 թվական

10.3. Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցություն.

62. Ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատման հստակ մեթոդաբանություն առկա չէ: Ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը հնարավոր է եղել գնահատել ջրային հաշվեկշռի մեթոդով: Կլիմայի փոփոխության պայմաններում գնահատված մթնոլորտային տեղումների, գոլորշացման, բնական հոսքի և մակերևութային հոսքի փոփոխությունների արժեքներից հաշվարկվել է ստորերկրյա ջրային ռեսուրսների փոփոխությունը: Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատման արդյունքները ամփոփված են աղյուսակ 10.3-ում:

Աղյուսակ 10.3. Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրային ռեսուրսների կանխատեսումը բազային 2025-2030 թվականների, 2040, 2070, 2100 թվականների համար

Գետավազան	2014-2024 բազային	2025	2026	2027	2028	2029	2030	2040	2070	2100
Որոտան	55.47	55.38	55.29	55.19	55.07	54.93	54.77	50.69	45.73	43.71
Ողջի	66.12	65.36	65.14	64.93	64.74	64.52	64.31	61.57	54.5	51.7
Մեղրիգետ	25.95	25.7	25.46	25.24	25.01	24.79	24.56	22.55	20.85	18.55
Հարավային ՋԿՏ	147.54	146.4	145.9	145.4	144.8	144.2	143.6	134.81	121.08	113.96

ԳԼՈՒԽ 11. ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

11.1. Ռիսկի գնահատման ինդիկատորներ և չափանիշներ.

63. Հարավային ՋԿՏ-ի մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների ռիսկերի ցուցանիշներն ու չափանիշները գնահատվել են ԵՄ ՋՇԴ սահմանման և ՀՀ ջրային օրենսգրքի համաձայն: Ըստ ԵՄ ՋՇԴ-ի ռիսկային ջրային մարմին է հատկորոշվում այն ջրային մարմինը, որում առկա է ՋՇԴ բնապահպանական նպատակների ձախողման վտանգ: ՀՀ ջրային օրենսգրքով, ռիսկային ջրային մարմին է սահմանվում այն մակերևութային կամ ստորերկրյա ջրային մարմինը, որի համար առկա է ջրավազանային կառավարման պլանի իրականացման տվյալ ցիկլում «գերազանց» կամ «լավ» կարգավիճակի չհասնելու կամ այդ կարգավիճակը չպահպանելու հավանականություն: Հարավային ՋԿՏ-ի մակերևութային և ստորերկրյա ջրային մարմինների համար ռիսկի գնահատումն իրականացվել է ճնշում-ազդեցություն վերլուծության արդյունքների, հիդրոլոգիական, ֆիզիկաքիմիական և հիդրոմորֆոլոգիական ցուցանիշների գնահատման հիման վրա: Հարավային ՋԿՏ-ում մակերևութային ջրերի կենսաբանական մոնիթորինգի տվյալների բացակայության պատճառով կենսաբանական տարրերի համար հնարավոր չի եղել որոշել ռիսկի գնահատման ցուցանիշներն ու չափանիշները: Ստորերկրյա ջրերի ռիսկի գնահատումը ևս հիմնված է քանակական և ֆիզիկաքիմիական բնութագրերի վրա:

11.2. Մակերևութային ջրերի ռիսկի գնահատում.

64. Հարավային ՋԿՏ ռիսկային ջրային մարմինների (այսուհետ՝ ՌՋՄ) հատկորոշումն իրականացվել է բացահայտված էական ճնշումների և ազդեցությունների վերլուծության արդյունքների հիման վրա: Արդյունքում հարավային ՋԿՏ-ում առանձնացվել են 35 ռիսկային ջրային մարմիններ, որոնք ներկայացված են 11.1 աղյուսակում:

Աղյուսակ 11.1. Հարավային ՋԿՏ-ում հատկորոշված ռիսկային ջրային մարմինները

ՌՋՄ -ի կոդը	ՌՋՄ -ի անվանումը	ՌՋՄ -ի նկարագրությունը
ՌՋՄ 6-008	Ծղուկ գետը՝ Սպանդարյանի ջրանցքից մինչև Սպանդարյանի ջրամբար	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային, քանի որ այս հատվածում չի պահպանվում Ծղուկ գետի էկոլոգիական թողքը հիմնականում ոռոգման նպատակով ջրառի և Սպանդարյանի ջրանցքի մեծ կորուստների պատճառով, ինչպես նաև հիդրոէներգետիկայի: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 4,2 կմ է:
ՌՋՄ 6-011	Որոտան գետը Սպանդարյանի ջրամբարից մինչև Անգեղակոթի ջրամբար	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային, քանի որ այս հատվածում մեծամասամբ ազդեցություն են կրում գյուղատնտեսական ցրված աղտոտումից առաջացած նիտրատներից խոցելի տարածքներ: Այդ հատվածում բացակայում է մշտական հոսքը, չկա հոսքը, և այն ձևավորվում է նոր միացող վտակներից: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 17,3 կմ է:
ՌՋՄ 6-017	Որոտան գետն Անգեղակոթի ջրամբարից մինչև Շաքի գետի հետ միախառնումը	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ հաշվի առնելով, որ Անգեղակոթի ջրամբարից հետո մոտ 500 լ/վ ջուր է բաց թողնվում, ինչը բավարար չէ գետի էկոլոգիական թողքը պահպանելու համար: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 4,2 կմ է:
ՌՋՄ 6-018	Որոտանի ձախակողմյան վտակ Շաքի գետը՝ Շաքի բնակավայրից ներքև (Շաքիի ջրվեժից) մինչև Որոտան գետին միախառնվելը	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային, քանի որ այս հատվածում չի պահպանվում Շաքի գետի էկոլոգիական թողքը՝ հիդրոէներգետիկ նպատակով ջրառի պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 0,9 կմ է:
ՌՋՄ 6-020	Որոտան գետը՝ Սիսիան քաղաքի տարածքում	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ ջրի որակական ցուցանիշների հիման վրա: Որոտան գետի այս հատվածում բացահայտվել է

		Սիսիան քաղաքի կենցաղային աղբի և կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ճնշում: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 3,9 կմ է:
ՌՋՄ 6-023	Սիսիան գետը՝ Թասիկ բնակավայրից մինչև Տոլորսի ջրամբար	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային, քանի որ այս հատվածում չի պահպանվում Սիսիան գետի էկոլոգիական թողքը՝ ոռոգման նպատակով ջրառի պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 7,4 կմ է:
ՌՋՄ 6-027	Այրիգետը՝ աջակողմյան վտակ Կիշկոշտ գետի միախառնումից մինչև Տորունիք բնակավայր և Կիշկոշտ գետը՝ Դաստակերտի հանքավայրից մինչև Այրիգետի հետ միանալը	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ Դաստակերտի պղնձամոլիբդենային հանքավայրի և Կիշկոշտ գետի վրա պոչամբարի դրենաժային և լվացման ջրերի ճնշման պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 7,3 կմ է:
ՌՋՄ 6-031	Սիսիան գետը՝ Տոլորսի ջրամբարից մինչև գետաբերան	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային էկոլոգիական թողքը չպահպանվելու պատճառով՝ Տոլորսի ջրամբարից հոսքի չկարգավորման արդյունքում: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 3,9 կմ է:
ՌՋՄ 6-032	Որոտան գետը՝ Սիսիան քաղաքից մինչև Շամբի ջրամբար	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ Որոտան գետի կենցաղային աղբի, կոմունալ-կենցաղային կեղտաջրերի, գյուղատնտեսությունից և անասնապահությունից հետադարձ հոսքերի ճնշման, ինչպես նաև հիդրոէներգետիկ ջրառի և էկոլոգիական թողքը չպահպանվելու պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 13,1 կմ է:
ՌՋՄ 6-035	Որոտան գետը՝ Շամբի ջրամբարից մինչև գետաբերան	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային, քանի որ այս հատվածում չի պահպանվում Որոտան գետի էկոլոգիական թողքը՝ հիդրոէներգետիկայի նպատակով ջրառի պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 29,2 կմ է:
ՌՋՄ 6-043	Գորիսգետը՝ Ակներ բնակավայրից մինչև Գորիս քաղաք	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային Ակներ, Բռուն և Վերիշեն բնակավայրերի կենցաղային աղբի, գյուղատնտեսությունից հետադարձ հոսքերի ճնշման, ինչպես նաև ոռոգման նպատակով ջրառի արդյունքում էկոլոգիական թողքը չպահպանվելու պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 5,3 կմ է:
ՌՋՄ 6-044	Գորիսգետը՝ Գորիս քաղաքից մինչև Քարահունջ բնակավայր	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ Գորիս քաղաքի կոմունալ-կենցաղային կեղտաջրերի, ինչպես նաև գյուղատնտեսությունից հետադարձ հոսքերի ճնշման պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 8,8 կմ է:
ՌՋՄ 6-051	Ողջի գետը՝ Քաջարանց և Կապուտջուղ վտակների միախառնումից մինչև	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ ջրի քանակական ցուցանիշների հիման վրա: Այս հատվածում չի պահպանվում Ողջի գետի էկոլո-

	Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկա	գիական թողքը՝ արդյունաբերական նպատակով ջրառի պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 2,5 կմ է:
ՌՋՄ 6-052	Ողջի գետը՝ Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատից մինչև Ողջիի ռեկուլտիվացված պոչամբար	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ ջրի քանակական և որակական ցուցանիշների հիման վրա: Բացահայտվել են Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ջրահեռացման համակարգերից արտահոսքերի, հանքավայրի տարածքում ձևավորված մակերևութային հոսքաջրերի և Քաջարան քաղաքում պինդ թափոնների առկայության էական ճնշումներ: Բացի այդ, չի պահպանվում էկոլոգիական թողքը՝ հանքարդյունաբերության ջրառի պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 7,5 կմ է:
ՌՋՄ 6-054	Ծակքար գետը՝ Մականաջուրի միախառնման կետից մինչև գետաբերան	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային ջրի քանակական և որակական ցուցանիշների հիման վրա: Այս հատվածում չի պահպանվում Ծակքար գետի էկոլոգիական թողքը՝ արդյունաբերական նպատակով ջրառի պատճառով: Ինչպես նաև բացահայտվել է, որ ԶՊՄԿ-ի հանքավայրի տարածքում ձևավորված մակերևութային հոսքաջրերը՝ հագեցած հանքանյութի բարձր պարունակությամբ, լցվում են Ծակքար և Ողջի գետ՝ էական ճնշում գործադրելով ջրի որակի վրա: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 3,5 կմ է:
ՌՋՄ 6-055	Դարափի գետն իր վտակով՝ մինչև Դարազամի կոնսերվացված պոչամբար	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային, քանի որ այս հատվածում բացահայտվել է, որ ԶՊՄԿ-ի հանքավայրի հանքարդյունաբերական թափոնների կուտակումներից (լցակույտեր) ձևավորված հանքանյութի բարձր պարունակությամբ մակերևութային հոսքաջրերը պոչամբարից հետո լցվում են Ողջի գետ՝ էական ճնշում գործադրելով ջրային ռեսուրսների որակի վրա: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 4,2 կմ է:
ՌՋՄ 6-060	Ողջի գետը՝ Ողջիի ռեկուլտիվացված պոչամբարից մինչև Գեղի գետի միախառնումը	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ ԶՊՄԿ-ի Ողջիի պոչամբարից հետո տեղումներով լվացման արդյունքում առաջացած դրենաժային ջրերի ճնշման պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 3,8 կմ է:
ՌՋՄ 6-065	Գեղի գետի աջակողմյան Գեղանուշ (Աջաբաջ) վտակը՝ «Լեռ-Էքս» ՍՊԸ-ի պարզարաններից մինչև գետաբերան և Գեղի գետը՝ Գեղանուշ (Աջաբաջ) վտակի	Ջրային մարմինն առանձնացվել է ջրի որակական ցուցանիշների հիման վրա: Գեղի գետի այս հատվածում բացահայտվել է «Լեռ-Էքս» ՍՊԸ-ի ջրահեռացման համակարգերի արտահոսքերի և Հանքասարի հանքավայրի մակերևութային հոսքաջրերի էական ճնշումը գետի ջրի որակի վրա:

	միախառնման կետից մինչև Նոր Աստղաբերդ բնակավայր	ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 2,5 կմ է:
ՌՋՄ 6-072	Ողջի գետը՝ Գեղի գետի միախառնման կետից մինչև ձախակողմյան վտակ Շղարշիկ վտակի միախառնումը	Ջրային մարմինն առանձնացվել է ջրի որակական և քանակական ցուցանիշների հիման վրա: Այս հատվածում չի պահպանվում Ողջի գետի էկոլոգիական թողքը՝ հիդրոէներգետիկայի նպատակով ջրառի պատճառով և առկա է հանքարդյունաբերության մակերևութային հոսքաջրերի էական ճնշում գետի ջրի որակի վրա: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 5,4 կմ է:
ՌՋՄ 6-074	Ողջի գետը՝ Շղարշիկ վտակի միախառնումից մինչև Կապան քաղաքում Կավարտ վտակի միախառնումը	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ քանակական և որակական ցուցանիշների հիման վրա: Այս հատվածում չի պահպանվում Ողջի գետի էկոլոգիական թողքը՝ հիդրոէներգետիկայի նպատակով ջրառի պատճառով: Առկա է նաև Կապան քաղաքի կենցաղային աղբի և կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ճնշում գետի ջրի որակի վրա: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 9,9 կմ է:
ՌՋՄ 6-075	Ողջի գետի ձախակողմյան վտակ Կավարտ գետը՝ ակունքից գետաբերան	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային, քանի որ այս հատվածում բացահայտվել է Կավարտի պղինձի հանքավայրը և հանքարդյունաբերական թափոնների կուտակումներից (լցակույտեր) ձևավորված հանքանյութի բարձր պարունակությամբ մակերևութային հոսքաջրերի էական ճնշումը, ինչպես նաև Կապան քաղաքի կենցաղային աղբի և կոմունալ-կենցաղային կեղտաջրերի էական ճնշումը գետի ջրի որակի վրա: Կավարտի բաց հանքի և արտադրական լցակույտերի ռեկուլտիվացման համալիր ծրագրի աշխատանքները նախատեսվում էր իրականացնել 2021-2023 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի շրջանակներում, սակայն մինչ օրս չեն իրականացվել: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 4,8 կմ է:
ՌՋՄ 6-077	Ողջի գետի աջակողմյան Վաչագան գետը՝ Կապան քաղաքի սահմաններում	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ Կապան քաղաքի կենցաղային աղբի և կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ճնշման պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 1,7 կմ է:
ՌՋՄ 6-078	Ողջի գետը՝ Կավարտ վտակի միախառնումից մինչև Սյունիք բնակավայր	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ Կապան քաղաքի կենցաղային աղբի և կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ճնշման, Կավարտի պղինձի հանքավայրից և հանքարդյունաբերական թափոնների կուտակումներից (լցակույտեր) ձևավորված մակերևութային հոսքաջրերի, ինչպես նաև Գեղանուշ և Արծվանիկ պոչամբարներից արտահոսքերի պատճառով: Գեղանուշի

		պոչամբարը աշխատում է ջրի շրջանառու համակարգով, սակայն եղանակային պայմաններով պայմանավորված՝ առկա է որոշակի արտահոսք: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 10,4 կմ է:
ՌՋՄ 6-081	Ողջի գետի աջակողմյան վտակ Գեղանուշ (Աջաբաջ) գետը՝ Գեղանուշի պոչամբարից մինչև գետաբերան	Գեղանուշի պոչամբարը գործում է ջրի շրջանառու համակարգով, սակայն եղանակային պայմաններով պայմանավորված՝ առկա է որոշակի արտահոսք: Ջրային մարմինն առանձնացվել է որպես դիսկային՝ հիմնականում Գեղանուշի պոչամբարի արտահոսքերի պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 0.8 կմ է:
ՌՋՄ 6-083	Ողջի գետի ձախակողմյան վտակ Աճանան (Նորաշենիկ) գետը՝ Արծվանիկի պոչամբարի պոչանքի խողովակաշարից մինչև գետաբերան	Ջրային մարմինն առանձնացվել է որպես դիսկային՝ հիմնականում «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի հանքավայրից տեղումներով ձևավորված մակերևութային հոսքաջրերի, ինչպես նաև դեպի Արծվանիկի պոչամբար գնացող պոչանքի խողովակաշարից արտահոսքի պատճառով, ինչպես նաև Արծվանիկ գետի հոսքի տեղափոխման թունելով անցնող Արծվանիկի պոչամբարի ջրերի աղտոտման պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 7,7 կմ է:
ՌՋՄ 6-092	Մեղրիգետ գետը՝ Լիճք բնակավայրից մինչև Գոզգոզ վտակի միախառնում	Ջրային մարմինն առանձնացվել է որպես դիսկային՝ հիմնականում «Վեղիա Ջուր» ՓԲԸ-ի և համայնքային ոռոգման ջրառի պատճառով, ինչպես նաև ՓՀԷԿ-ի շահագործման հետևանքով 1700-1460 մ բարձրության վրա Մեղրիգետ գետի էկոլոգիական թողքը չպահպանելու պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 4,0 կմ է:
ՌՋՄ 6-098	Մեղրիգետ գետը՝ Թխկուտ և Վարդանիձոր բնակավայրի միջև	Ջրային մարմինն առանձնացվել է որպես դիսկային՝ Լիճքվագ-Թեյի, Այգեձորի և Տերտերասարի հանքավայրերի տարածքներում ձևավորված մակերևութային հոսքաջրերի և հանքարդյունաբերական թափոնների կուտակումներից (լցակույտեր) առաջացած հետադարձ հոսքերի ճնշման հետևանքով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 2,6 կմ է:
ՌՋՄ 6-100	Մեղրիգետ գետը՝ Վարդանիձոր բնակավայրից մինչև ք. Մեղրի	Ջրային մարմինն առանձնացվել է որպես դիսկային՝ Մեղրիգետ գետի միջին հոսանքներում Մեղրիի համայնքի ոռոգման ջրառի և ՓՀԷԿ-ի շահագործման հետևանքով գետի մոտ 1000-700 մ բարձրության վրա էկոլոգիական թողքը չպահպանվելու պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 8,1 կմ է:
ՌՋՄ 6-104	Մեղրիգետ գետը՝ ք. Մեղրիի սահմաններում	Ջրային մարմինն առանձնացվել է որպես դիսկային՝ Մեղրի քաղաքի կենցաղային աղբով աղտոտման,

		ինչպես նաև ոռոգման նպատակով ջրառի պատճառով Մեղրի գետում էկոլոգիական թողքը չպահպանվելու պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 3,1 կմ է:
ՌՋՄ 6-106	Կարճևան գետը՝ Կարճևան բնակավայրից մինչև Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ բնակիչների կողմից ջրառի պատճառով, Կարճևան բնակավայրից մինչև Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի հատվածը գետի էկոլոգիական թողքը չպահպանվելու պատճառով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 1,3 կմ է:
ՌՋՄ 6-107	Կարճևան գետը՝ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատից մինչև գետաբերան	Ջրային մարմինն առանձնացվել է որպես ռիսկային՝ գետավազանում գործող «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ջրահեռացման համակարգերից արտահոսքերի և քաղաքի կոմունալ-կենցաղային կեղտաջրերի ճնշման հետևանքով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 4,8 կմ է:

11.3. Ստորերկրյա ջրերի ռիսկի գնահատում.

65. Հարավային ՋԿՏ-ի ջրային մարմինների քանակական և որակական տվյալների հիման վրա 5 ստորերկրյա ջրային մարմիններից 2-ը գնահատվել է որպես հնարավոր/պոտենցիալ ռիսկային՝ պայմանավորված կետային և ցրված աղբյուրներից չմաքրված կոմունալ-կենցաղային և հանքարդյունաբերական կեղտաջրերով, ինչպես նաև գյուղատնտեսությունից հետադարձ հոսքաջրերով աղտոտմամբ և ներկայացված է աղյուսակ 11.2-ում:

11.4. Բնապահպանական նպատակներ մակերևութային և ստորերկրյա ջրային մարմինների համար.

66. Ռիսկային ջրային մարմինների համար ջրի քանակական և որակական ցուցանիշների հիման վրա սահմանված բնապահպանական նպատակները ներկայացված են աղյուսակ 11.1-ում: Հնարավոր/պոտենցիալ ռիսկային ստորերկրյա ջրային մարմինների համար սահմանված բնապահպանական նպատակները ներկայացված են աղյուսակ 11.2-ում:

Աղյուսակ 11.2. Ռիսկային ջրային մարմինների համար սահմանված բնապահպանական նպատակները

Ռիսկային մակերևութային ջրային մարմին և դրա երկարությունը	Ռիսկային ջրային մարմին լինելու պատճառները	Ջրի կարգավիճակը 2017-2022 թվականներ	Բնապահպանական նպատակը
Մեղրի գետ գետը՝ Վարդանիձոր բնակավայրից մինչև Մեղրի քաղաք, երկարությունը՝ 8.1 կմ	Էկոլոգիական թողքը չի պահպանվել	Էկոլոգիական «վատ» կարգավիճակ՝ ըստ գետի հիդրոլոգիայի	Ապահովել ջրային մարմինների համար հաշվարված բնապահպանական թողքը
Ողջի գետը՝ Զանգեզուրի պղնձամուխրդենային կոմբինատից մինչև Ողջիի ռեկուլտիվացված պոչամբար, երկարությունը՝ 7.5 կմ	Էկոլոգիական թողքը չի պահպանվել	Էկոլոգիական «վատ» կարգավիճակ՝ ըստ գետի հիդրոլոգիայի	
Ողջի գետը՝ Կավարտ վտակի միախառնումից մինչև գետաբերան, երկարությունը՝ 10.4 կմ	Էկոլոգիական թողքը չի պահպանվել	Էկոլոգիական «վատ» կարգավիճակ՝ ըստ գետի հիդրոլոգիայի	
Գեղի գետը Գեղիի ջրամբարից մինչև Զանգեզուրի ՊՄԿ-ի պոչանքի խողովակաշարերը, երկարությունը՝ 10.4 կմ	Էկոլոգիական թողքը չի պահպանվել	Էկոլոգիական «վատ» կարգավիճակ՝ ըստ գետի հիդրոլոգիայի	
Ողջի գետի աջակողմյան Վաչագան գետը՝ Կապան քաղաքի սահմաններում, երկարությունը՝ 1.7 կմ	Էկոլոգիական թողքը չի պահպանվել	Էկոլոգիական «վատ» կարգավիճակ՝ ըստ գետի հիդրոլոգիայի	
Որոտան գետը մինչև Սպանդարյանի ջրամբար՝ Ուղտիաչք, Զուխտակն, Միլիցաթոռ և Ղուռիգետ վտակների հետ միասին, երկարությունը 73.0 կմ	Էկոլոգիական թողքը չի պահպանվել	Էկոլոգիական «վատ» կարգավիճակ՝ ըստ գետի հիդրոլոգիայի	
Որոտան գետը՝ Սիսիան քաղաքից ներքև մինչև Շամբի ջրամբար, երկարությունը 13.1 կմ	Էկոլոգիական թողքը չի պահպանվել	Էկոլոգիական «վատ» կարգավիճակ՝ ըստ գետի հիդրոլոգիայի	
Ծղուկ գետը՝ Սպանդարյանի ջրանցքից մինչև Սպանդարյանի ջրամբար, երկարությունը 4.2 կմ	Էկոլոգիական թողքը չի պահպանվել	Էկոլոգիական «վատ» կարգավիճակ՝ ըստ գետի հիդրոլոգիայի	

Աղյուսակ 11. 3. Հնարավոր/ պոտենցիալ ռիսկային ստորերկրյա ջրային մարմինների համար սահմանված բնապահպանական նպատակներ

ՀՌՍՋՄ անվանումը	Ջրի կարգավիճակը 2023 թվական	Հնարավոր/ պոտենցիալ ռիսկային ջրային մարմին լինելու պատճառները	Բնապահպանական նպատակը
Դաստակերտ-Դարբաս, Որոտանի միջին և ստորին հոսանքների աջափնյա հատված	«Լավ» կարգավիճակ ունենալու համար պոտենցիալ ռիսկային	Տարածքում հանքարդյունաբերական ճնշման առկայություն, ինչպես նաև ցրված աղբյուրներից կոմունալ-կենցաղային կեղտաջրերի և գյուղատնտեսությունից հետադարձ հոսքերով տեղանքի աղտոտում:	Բարելավել ջրային մարմինների քիմիական և քանակական կարգավիճակը
Լիճքի հատված	«Լավ» կարգավիճակ ունենալու համար պոտենցիալ ռիսկային	Տարածքում հանքարդյունաբերական ճնշման առկայություն:	
Տաշտունի հատված	«Լավ» կարգավիճակ ունենալու համար պոտենցիալ ռիսկային	Տարածքում հանքարդյունաբերական ճնշման առկայություն:	
Ագարակի հատված	«Լավ» կարգավիճակ ունենալու համար պոտենցիալ ռիսկային	Տարածքում հանքարդյունաբերական ճնշման առկայություն, ինչպես նաև ցրված աղբյուրներից կոմունալ-կենցաղային կեղտաջրերի և գյուղատնտեսությունից հետադարձ հոսքերով տեղանքի աղտոտումը:	
Վարդանիձոր-Վահրավար-Կուրիս հատված	«Լավ» կարգավիճակ ունենալու համար պոտենցիալ ռիսկային	Տարածքում հանքարդյունաբերության ճնշման առկայություն:	

11.5. Նպատակներ պահպանվող տարածքների համար.

67. Հարավային ԶԿՏ-ի պահպանվող տարածքների համար բնապահպանական նպատակները ներկայացված են աղյուսակ 11.3-ում: Հարավային ԶՏԿ-ի ջրային

ռեսուրսների վրա առկա արտաքին և անվտանգային ռիսկերը ներկայացված են աղյուսակ 11.4-ում:

Աղյուսակ 11.4. Պահպանվող տարածքների համար սահմանված բնապահպանական նպատակներ

Հ/հ	Պահպանվող տարածք	Բնապահպանական նպատակ
1.	Խմելու ջրի ջրհավաք տարածքներ՝ խմելու ջրի աղբյուրների խմբերի 9.97 կմ ² ընդհանուր տարածքով 26 տեղամաս	Ունենալ պահպանվող տարածքի համար ԵՄ ՋՇԴ և ՀՀ առողջապահության նախարարի N 803, 29.11.2002 թ. որոշմանը համահունչ ռեգիստր և բնորոշել սանիտարական պահպանման գոտին
2.	«Ջանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ	Ունենալ ազգային պարկի համար ԵՄ ՋՇԴ և «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքին համահունչ ռեգիստր, «Ջանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի ԲՀՊՏ-ների և «Գորիսի» ՊԱ-ի կառավարման պլաններ
3.	Բնության հուշարձաններ	Ունենալ պահպանվող տարածքի համար ԵՄ ՋՇԴ և «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքին համահունչ ռեգիստր
4.	Ջրաէկոհամակարգերի 79 սանիտարական պահպանման, 112 հոսքի ձևավորման, 121 հորատանցքերի և 472 աղբյուրների համար ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանության, ջրապահպան գոտիների, 11 էկոտոնի և 6 անօտարելի գոտիներ	Կատարել փոփոխություններ Կառավարության 20.01.2005 թ. N 64-Ն որոշման մեջ, ստեղծել տարանջատման և մոնիթորինգի համակարգ
5.	Նիտրատներից խոցելի տարածքներ	Ունենալ պահպանվող տարածքի համար ԵՄ ՋՇԴ և Նիտրատների դիրեկտիվին համահունչ ռեգիստր, մոնիթորինգ
6.	Բնական աղետների գոտիներ	Ունենալ պահպանվող տարածքի համար ԵՄ ՋՇԴ և Հեղեղների դիրեկտիվին համահունչ ռեգիստր
7.	«Ողջի» պետական հիդրոլոգիական արգելոց	«Ջանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի տարածքում ունենալ «Ողջի» պետական հիդրոլոգիական արգելոցի գրանցված և պահպանվող տարածքի համար ԵՄ ՋՇԴ-ի, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքին և անդրսահմանային նշանակության ջրային մարմինների համար իրավական կարգավորումներին համահունչ ռեգիստր, մոնիթորինգի և զննահատման համակարգ «Ողջի» պետական հիդրոլոգիական արգելոցի կառավարման պլան

Հ/հ	Պահպանվող տարածք	Բնապահպանական նպատակ
8.	«Լիճք» պետական հիդրոլոգիական արգելոց	«Ջանգեզուր» Կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի «Արևիք» ԱՊ-ի տարածքում ունենալ «Լիճք» պետական հիդրոլոգիական արգելոցի գրանցված և պահպանվող տարածքի համար ԵՄ ԶՇԴ-ի, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքին (2006թ) և անդրսահմանային նշանակության ջրային մարմինների համար իրավական կարգավորումներին համահունչ ռեգիստր, մոնիթորինգի և գնահատման համակարգ «Լիճք» պետական հիդրոլոգիական արգելոցի կառավարման պլան
9.	«Շաքի» պետական հիդրոլոգիական արգելոց	Ունենալ գրանցված և պահպանվող տարածքի համար ԵՄ ԶՇԴ-ի, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքին (2006թ) համահունչ ռեգիստր, մոնիթորինգի և գնահատման համակարգ «Շաքի» պետական հիդրոլոգիական արգելոցի կառավարման պլան

Աղյուսակ 11. 5. Հարավային ԶՏԿ-ի ջրային ռեսուրսների վրա առկա արտաքին և անվտանգային ռիսկեր

Հ/հ	Տարածքը	Արտաքին ռիսկը
1	Ծավ գետի աջակողմյան վտակ Քուչիգետի ջրհավաք ավազանը	Ծավ գետի ստորին հոսանքները գտնվում են սահմանային հատվածում, ինչը համարվում է Շիկահող արգելոցի մի մասը: Ծավ գետի ջրհավաք ավազանի մի մասը՝ սահմանից մինչև Ներքին Հանդ բնակավայր, ճնշում է հանդիսանում այս տարածքի ջրային ռեսուրսների վրա, որի արդյունքում Ներքին Հանդ բնակավայրում առաջացել է խմելու ջրի խնդիր:
2	Սև լիճ	Սև լիճն իր շրջակա տարածքով հանդիսանում է արգելավայր, որը մտնում է «Ջանգեզուր» կենսոլորտային ՊՈԱԿ-ի կազմի մեջ: Գորիսգետի գետավազանում Սև լիճն իր շրջակա տարածքի հետ գտնվում է սահմանային հատվածում:
3	Գորիսգետի վերնագավառներում գտնվող՝ ոռոգման համար նախատեսված հիդրոտեխնիկական կառուցվածքներ	Գորիսգետի վերնագավառներում գտնվող, ոռոգման համար նախատեսված հիդրոտեխնիկական կառուցվածքներից անհնար է ջրառ իրականացնել՝ սահմանային հատվածում գտնվելու պատճառով: Աղբյուրների կապտածին և ջրագծերին մոտենալը և վերանորոգելը նույնպես հնարավոր չէ, քանի որ դրանք գտնվում են դիտարկման դաշտում՝ մասնավորապես Զիլի ջրամբարը: Գորիսգետի ավազանի վերնագավառներում Մեծշեն և Մեծգետ վտակների ջրհավաք ավազաններում, բազմաթիվ աղբյուրներ կան, որոնք խմելու-կենցաղային նպատակով օգտագործվում են Ակներ, Վերիշեն, Գորիս և մի շարք այլ բնակավայրերի համար: Վերը նշված աղբյուրները գտնվում են անմիջական դիտարկման տակ: Աղբյուրներից խմելու-կենցաղային նպատակով ջրօգտագործումն առաջացնում է խնդիր նշված բնակավայրերի համար՝ անհնար դարձնելով այդ աղբյուրներին մոտենալը, վերանորոգման աշխատանքներ իրականացնելը:
4	Որոտան գետի ակունքները (հոսքի	Որոտան գետի ակունքները (հոսքի ձևավորման տարածքը), գտնվում են Ադրբեջանի տարածքում: Որոտան գետի ձախակողմյան վտակ Ծղուկ

Հ/հ	Տարածքը	Արտաքին ռիսկը
	ձևավորման տարածք)	գետի ակունքները նույնպես գտնվում են Ադրբեջանի տարածքում: Որոտան գետի և նրա ձախակողմյան վտակ Ծղուկ գետի ջրերը օգտագործվում են ոռոգման, հիդրոէներգետիկայի, ձկնաբուծության և այլ նպատակներով: Որոտանի և Ծղուկ գետի ջրային պաշարները Սպանդարյան ջրամբարով կապվում են Սևանա լճի հետ: Հաշվի առնելով վերը նշվածը՝ քանակական և որակական անվտանգության ռիսկեր կարող են առաջանալ:

68. Անվտանգային ռիսկերի մեղմման և մարտահրավերների հաղթահարման համար առաջնահերթ առաջարկվում է Հայաստանից դուրս հոսող ջրային ռեսուրսների օգտագործելի մասը կուտակել երկրի ներսում, կառուցել ամբարտակները և ոռոգման համակարգերը՝ թիրախավորելով ամենախոցելի համայնքները:

69. Անդրսահմանային և սահմանամերձ ջրային ռեսուրսների անվտանգ օգտագործման համար անհրաժեշտ է՝

- 1) սահմանային հատվածներում իրականացնել ջրի որակի, քանակի մոնիթորինգ և ուսումնասիրել մոնիթորինգային նոր դիտակետերի անհրաժեշտությունը.
- 2) խմելու և ոռոգման խնդիրների լուծման ուղիների միջոցառումների մշակում.
- 3) կրճատել ջրակորուստները.
- 4) սահմանամերձ բնակավայրերում վերանորոգել խմելու ջրի ներքին ցանցը.
- 5) ամբողջական վերազինել գործող ոռոգման ենթակառուցվածքները:

ԳԼՈՒԽ 12. ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶՐԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ԶՐԱՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

12.1. Զրային ռեսուրսների առաջարկը՝ ըստ առանձին ջրային ռեսուրսների.

12.1.1. Մակերևութային ջրային ռեսուրսներ.

70. Զրառաջարկը գնահատվել է՝ հաշվի առնելով հարավային ԶԿՏ-ի գետավազանների 2014-2024 թվականների ժամանակահատվածի միջին բազմամյա տվյալներով օգտագործելի ջրային ռեսուրսների քանակը (տես՝ աղյուսակ 12.1)՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա:

Աղյուսակ 12.1. Հարավային ՋԿՏ-ի մակերևութային ջրային ռեսուրսների ջրառաջարկը և ջրառաջարկի կանխատեսվող փոփոխությունները 2025-2030 թվականների և մինչև 2100 թվականի ժամանակահատվածների համար

Գետավազան	2024 թ. (բազային)	2025 թ.	2026 թ.	2027 թ.	2028 թ.	2029թ.	2030 թ.	2040 թ.	2070 թ.	2100 թ.
Որոտան	418.65	418.36	417.93	417.60	417.31	417.00	416.66	405.65	384.55	357.95
Ողջի	205.78	205.4	204.8	204.3	203.9	203.4	202.8	183.2	176.3	153.9
Մեղրիգետ	74.56	74.34	74.05	73.92	73.71	73.56	73.37	65.86	58.32	46.88
Հարավային ՋԿՏ	698.99	698.1	696.8	695.8	694.9	693.9	692.9	654.7	619.2	558.7

Աղբյուր՝ «Հայհիդրոմետր» ՊՈԱԿ, 2025 թ.

12.1.2. Ստորերկրյա ջրային ռեսուրսներ.

71. Հաշվի առնելով ստորերկրյա ջրերի ձևավորման ուղիղ կախվածությունը տեղումներից և կապը մակերևութային հոսքի հետ՝ հաշվեկշռային եղանակով գնահատվել են ստորերկրյա ջրերի քանակի հնարավոր փոփոխությունները կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում (տես՝ աղյուսակ 12.2):

Աղյուսակ 12. 2. Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրային ռեսուրսների ջրառաջարկը և ջրառաջարկի կանխատեսվող փոփոխությունները 2025-2030 թվականների և մինչև 2100 թվականի ժամանակահատված համար

Գետավազան	2024 թ. (բազային)	2025 թ.	2026 թ.	2027 թ.	2028 թ.	2029 թ.	2030 թ.	2040 թ.	2070 թ.	2100 թ.
Որոտան	55.47	55.38	55.29	55.19	55.07	54.93	54.77	50.69	45.73	43.71
Ողջի	66.12	65.36	65.14	64.93	64.74	64.52	64.31	61.57	54.5	51.7
Մեղրիգետ	25.95	25.7	25.46	25.24	25.01	24.79	24.56	22.55	20.85	18.55
Հարավային ՋԿՏ	147.54	146.44	145.89	145.36	144.82	144.24	143.64	134.81	121.08	113.96

Աղբյուր՝ «Հայհիդրոմետր» ՊՈԱԿ, 2025 թվական

12.2. Ջրապահանջարկի գնահատում՝ ըստ առանձին ջրային ռեսուրսների և ջրօգտագործման նպատակների.

12.2.1. Մակերևութային ջրային ռեսուրսներ.

72. ՇՄՆ-ի կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների տվյալների համաձայն՝ մակերևութային ջրառն ըստ ոլորտների հիմնականում իրա-

կանացվել է հիդրոէներգետիկ, արդյունաբերական, խմելու-կենցաղային և ոռոգման նպատակներով (տես՝ աղյուսակ 12.3):

Աղյուսակ 12. 3. Հարավային ՋԿՏ-ի տարեկան մակերևութային ջրառն ըստ ոլորտների, մլն. մ³ 2025 թվականի հունվարի դրությամբ

Գետավազան	Ընդամենը ջրառը	Ջրօգտագործումն ըստ ոլորտների					
		Խմելու-կենցաղային	Ոռոգում	Արդյունաբերություն	Ձկնաբուծություն	Հիդրոէներգետիկա*	Ջրաբիացում
Որոտան	2284.76	0	36.99	0.0	3.36	2120.94	0
Ողջի	587.66	19.32	5.20	71.40	0	491.74	0
Մեղրիգետ	70.39	7.89	9.38	0	0	53.11	0
Հարավային ՋԿՏ	2857.31	27.21	51.57	71.40	3.36	2665.79	0

*Հիդրոէներգետիկ նպատակով ջրօգտագործումը համարվում է ոչ սպառողական ջրօգտագործում Աղբյուրը՝ ՀՀ ՇՄՆ Ջրային ռեսուրսների պետական կադաստր, 2025 թվական

12.2.2.Ստորերկրյա ջրային ռեսուրսներ.

73. ՇՄՆ-ի կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների տվյալների համաձայն՝ ստորերկրյա ջրառն ըստ ոլորտների իրականացվել է արդյունաբերության, խմելու-կենցաղային, ոռոգման, հիդրոէներգետիկ և ձկնաբուծության նպատակներով (տես՝ աղյուսակ 12.4):

Աղյուսակ 12.4.Հարավային ՋԿՏ-ի տարեկան ստորերկրյա ջրառն ըստ ոլորտների, մլն. մ³ 2025 թվականի հունվարի դրությամբ

Գետավազան	Ընդամենը ջրառը	Ջրօգտագործումն ըստ ոլորտների					
		Խմելու-կենցաղային	Ոռոգում	Արդյունաբերություն	Ձկնաբուծություն	Հիդրոէներգետիկա*	Ջրաբիացում
Որոտան	122.97	117.49	1.49	0.04	0	4.45	0.01
Ողջի	5.11	0	0	0	0	0	0
Մեղրիգետ	0.50	0.38	0.05	0.07	0	0	0
Հարավային ՋԿՏ	128.58	122.97	1.54	0.11	4.02	4.45	0.07

*Հիդրոէներգետիկ նպատակով ջրօգտագործումը համարվում է ոչ սպառողական ջրօգտագործում Աղբյուրը՝ ՀՀ ՇՄՆ Ջրային ռեսուրսների պետական կադաստր, 2025 թվական

12.3. Զրառաջարկի և ջրապահանջարկի փոփոխության վերլուծություն.

74. Հարավային ԶԿՏ-ում հետագա տարիներին ջրային ռեսուրսների հասանելիությունն ըստ ոլորտների գնահատելու նպատակով կանխատեսվել են ԶԿՏ-ի գետավազաններում ջրառաջարկն ու տնտեսական զարգացմամբ պայմանավորված ջրապահանջարկը՝ կառավարման պլանավորման երկրորդ վեցամյա ժամանակահատվածի համար (2025-2030 թվականներ): Զրառաջարկի կանխատեսումները տրվել են ԿՓՓՄԽ կողմից առաջարկված RCP6.0 սցենարի համաձայն, որի դեպքում կանխատեսվում է հարավային ԶԿՏ-ի ջրային ռեսուրսների նվազում՝ մինչև 2030 թ. 0.9%-ով: Հարավային ԶԿՏ-ում ջրառաջարկի և ջրապահանջարկի միտումները մինչև 2030 թ., ըստ ջրօգտագործման ոլորտների, ներկայացված են աղյուսակ 12.5-ում:

Աղյուսակ 12.5. Հարավային ԶԿՏ-ում մակերևութային ջրառաջարկի և ջրապահանջարկի հարաբերությունն ըստ ոլորտների մինչև 2030 թվական՝ մլն մ³

Գետավազան	Ջրօգտագործումն ըստ ոլորտների*	2024 թ. (բազիսային)	2025 թ.	2026 թ.	2027 թ.	2028 թ.	2029 թ.	2030 թ.
Որոտան	Խմելու-կենցաղային	117.5	118.34	118.34	119.19	120.04	120.89	121.74
	Ոռոգում	38.5	41.17	42.32	43.47	44.63	45.78	46.55
	Արդյունաբերություն	0.04	0.05	0.18	0.27	0.35	0.47	0.56
	Ձկնաբուծություն	3.4	3.46	3.59	3.73	3.86	4.00	4.13
	Զրարբիացում	0.01	0.011	0.011	0.012	0.012	0.013	0.013
	Ընդամենը ջրապահանջարկը	159.37	163.02	164.44	166.67	168.89	171.15	173.00
	Զրառաջարկը	474.12	473.74	473.22	472.79	472.38	471.93	471.43
	Դեֆիցիտը/պրոֆիցիտը	314.75	310.72	308.78	306.12	303.49	300.78	298.43
Ողջի	Խմելու-կենցաղային	24.4	25.1	25.2	25.5	25.7	26.0	26.3
	Ոռոգում	5.2	5.35	5.54	5.76	5.85	6.13	6.44
	Արդյունաբերություն	71.4	73.5	75.0	76.4	77.8	79.3	80.7
	Ձկնաբուծություն	0.0	0.1	0.2	0.3	0.4	0.5	0.6
	Զրարբիացում	0.0	0.05	0.06	0.07	0.08	0.09	0.10
	Ընդամենը ջրապահանջարկը	101.02	104.13	105.98	108.03	109.85	111.97	114.09

	Ջրառաջարկը	271.90	270.71	269.98	269.25	268.61	267.88	267.13
	Դեֆիցիտ/պրոֆիցիտ	170.88	166.58	164.00	161.22	158.76	155.91	153.04
Մեղրիգետ	Խմելու-կենցաղային	8.27	8.61	8.69	8.78	8.86	8.94	9.03
	Ոռոգում	9.44	9.72	10.00	10.29	10.57	10.85	11.14
	Արդյունաբերություն	0.07	0.07	0.07	0.08	0.08	0.08	0.08
	Ձկնաբուծություն	0.00	0.05	0.10	0.15	0.20	0.25	0.30
	Ջրարբիացում	0.00	0.01	0.03	0.04	0.05	0.06	0.07
	Ընդամենը ջրապահանջարկը	17.78	18.46	18.90	19.33	19.76	20.19	20.62
	Ջրառաջարկը	100.51	100.04	99.51	99.16	98.72	98.35	97.93
	Դեֆիցիտ/պրոֆիցիտ	82.73	81.58	80.61	79.83	78.96	78.16	77.31
Հարավային ՋԿՏ	Խմելու-կենցաղային	150.19	152.04	152.24	153.47	154.60	155.84	157.04
	Ոռոգում	53.11	56.24	57.86	59.52	61.05	62.77	64.13
	Արդյունաբերություն	71.51	73.66	75.22	76.74	78.25	79.80	81.32
	Ձկնաբուծություն	3.36	3.61	3.89	4.18	4.46	4.75	5.03
	Ջրարբիացում	0.01	0.07	0.10	0.12	0.14	0.16	0.18
	Ընդամենը ջրապահանջարկը	278.2	285.6	289.3	294.0	298.5	303.3	307.7
	Ջրառաջարկը	846.53	844.49	842.71	841.20	839.71	838.16	836.49
	Դեֆիցիտ/պրոֆիցիտ	568.35	558.87	553.39	547.17	541.20	534.84	528.78

* Հիդրոէներգետիկական համարվում է ոչ սպառողական ջրօգտագործող, ուստի դրա ծավալը չի արտացոլվում ընդհանուր ջրառաջարկի և ջրապահանջարկի հաշվարկներում:

*Դեֆիցիտ/պրոֆիցիտ տողում կապույտ գույնով նշվում են այն թվերը, որոնք վերագրվում են ջրի պրոֆիցիտին (ջրի ավելցուկ):

Աղբյուրը՝ ՀՀ ՇՄՆ Ջրային ռեսուրսների պետական կադաստր 2025 թ.:

12.4. Ջրառաջարկի և ջրապահանջարկի գնահատման համառոտ ամփոփում.

75. Հարավային ՋԿՏ-ի գետավազաններում ջրառաջարկի և ջրապահանջարկի վերլուծությունը ցույց է տալիս, որ մինչև 2030 թվականի ջրապահանջարկը կաճի մոտ 14.7%-ով՝ 280.9 մլն մ³-ից՝ հասնելով մինչև 319.1 մլն մ³-ի: Հարավային ՋԿՏ-ում մինչև 2030 թ. կանխատեսվում է ջրառաջարկի մոտ 11.8%-ով նվազում՝ 846.5 մլն մ³-ից մինչև 836.5 մլն մ³-ի:

12.5. Ջրավազանում արգելված կամ որոշ սահմանափակումներով գործունեության տեսակներ.

1) Որոտան գետում արգելվում է նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների նոր ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը՝ բացառությամբ

ջրային ռեսուրսի հոսքի ուղղությամբ (գետաբերանից դեպի գետաթափ վայրը)՝ Հայաստանի Հանրապետության սահմանին հարակից վերջին բնակավայրի վարչական տարածքում.

2) հանքարդյունաբերական կազմակերպությունների ջրօգտագործման թույլտվությունների երկարաձգման դեպքում ջրօգտագործման թույլտվությունում ամրագրվում է ջրօգտագործումը ջրի շրջանառու համակարգով իրականացնելու պայման:

ԳԼՈՒԽ 13. ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

13.1. Զրոգտագործման տարբեր ոլորտների տնտեսական վերլուծություն.

76. Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 204-րդ և 205-րդ հոդվածների համաձայն՝ մակերևութային և ստորերկրյա ջրերի օգտագործման համար վճարների դրույքաչափերը (<< դրամ/մ³) ներկայացված են աղյուսակ 13.1-ում:

Աղյուսակ 13. 1. Մակերևութային և ստորերկրյա ջրերի օգտագործման համար սահմանված վճարների դրույքաչափերը (<< դրամ/մ³)

Զրոգտագործման ոլորտը	2017 թվական և մինչ այդ		2018 թվական		2019 թվական		2020 թվական և դրանից հետո	
	ՄՋ*	ՍՋ**	ՄՋ	ՍՋ	ՄՋ	ՍՋ	ՄՋ	ՍՋ
Ձկնատնտեսական	1	1	1.1	1.1	1.2	1.2	1.3	1.3
Արդյունաբերություն	0.5	1	0.55	1.1	0.6	1.2	0.65	1.3
Իմելու-կենցաղային (բացառությամբ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների համար)	0.5	1	0.55	1.1	0.6	1.2	0.65	1.3
Իմելու ջրի մատակարարման և ջրա- հեռացման ծառայություններ մատու- ցող կազմակերպությունների ու տե- ղական ինքնակառավարման մարմինների համար	0.025	0.05	0.0275	0.055	0.03	0.06	0.0325	0.065
Ոռոգում	0	1	0	1.1	0	1.2	0	1.3
Հիդրոէներգետիկա	2վ***	2վ	2վ	2վ	2վ	2վ	0.1	-
Սևանա լիճ	1.5	-	1.65	-	1.8	-	1.95	-

*ՄՋ-մակերևութային ջուր, **ՍՋ-ստորերկրյա ջուր, ՉՎ*** - չի վճարում

77. Ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար բնապահպանական հարկի դրույքաչափերը ներկայացված են ստորև՝ աղյուսակ 13.2-ում: Սևանա լճի ջրահավաք ավազան, Հրազդանի կիրճի տարածքում Հրազդան և Գետառ գետեր վնասակար նյութերի և միացությունների արտահոսք իրականացնողների (բացառությամբ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցողների) համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերը կրկնապատկվում են: Օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հարկման բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր վնասակար նյութի կամ միացության չափաքանակները գերազանցող փաստացի արտահոսքի ծավալի համար որպես դրույքաչափ կիրառվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի եռապատիկ մեծությունը (հաշվի առնելով նաև սույն հոդվածի 2-րդ մասի դրույթները): Օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ հարկման բազայի գրոյական չափաքանակների դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր վնասակար նյութի կամ միացության փաստացի արտահոսքի ծավալի համար որպես դրույքաչափ կիրառվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված (հաշվի առնելով նաև սույն հոդվածի 2-րդ մասի դրույթները) դրույքաչափերի՝ ա. տասնապատիկը՝ Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզերում, բ. հնգապատիկը՝ Հայաստանի Հանրապետության մյուս տարածքներում: 2018 թվականի հունվարի 1-ից ջրային ռեսուրս վնասակար նյութերի և միացությունների արտահոսքի համար կիրառվող բնապահպանական հարկի դրույքաչափերը որոշվում են որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի և 1.1 գործակցի արտադրյալ, 2019 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի և 1.2 գործակցի

արտադրյալ, իսկ 2020 թվականի հունվարի 1-ից՝ որպես սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի և 1.3 գործակցի արտադրյալ:

Աղյուսակ 13. 2. Ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար բնապահպանական հարկի սահմանված դրույքաչափերը

Արտանետվող վնասակար նյութեր և միացություններ	Դրույքաչափը հաշվետու ժամանակաշրջանում արտահոսքի յուրաքանչյուր տոննայի համար (դրամ)
Կախված նյութեր	5300
Ազոտ ամոնիակային	5100
Թթվածնի կենսաբանական պահանջ	18400
Նավթամթերք	204600
Պղինձ	1023900
Ցինկ	1023900
Սուլֆատներ	100
Քլորիդներ	30
Նիտրիտներ	511500
Նիտրատներ	1100
Ընդհանուր ֆոսֆոր	40000
Դետերգենտ (լվացող քիմիական) նյութեր	102300
Ծանր մետաղների աղեր	511500
Ցիան և ցիանի միացություններ	511500
<p>Այլ վնասակար նյութեր և միացություններ՝ սույն աղյուսակում չնշված այն վնասակար նյութերը և միացությունները, որոնց մասով արտահոսքի փաստացի ծավալները գերազանցում են ջրօգտագործման թույլտվություններով նախատեսված՝ կեղտաջրերում վնասակար նյութերի և միացությունների սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները, կամ բացակայում են ջրօգտագործման թույլտվությունները, կամ ջրօգտագործման թույլտվություններում նշված չեն սահմանային թույլատրելի արտահոսքի ծավալները, կամ ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոններով նախատեսված սահմանային թույլատրելի արտահոսքերի ծավալները որոշված չեն</p>	<p>Դջուր = 10000 դրամ/ՍԹԿձկն որտեղ՝ ՍԹԿձկն-ն ձկնատնտեսական նպատակով օգտագործվող ջրում տվյալ նյութի կամ միացության սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է</p>

78. Հարավային ՋԿՏ-ում ջրի հիմնական ծառայությունների նկարագիրը ներկայացված է աղյուսակ 13.3-ում:

Աղյուսակ 13. 3. Հարավային ՋԿՏ-ի ջրի հիմնական ծառայությունների նկարագիրը

Ջրային ծառայություններ

Փոփոխականների նկարագրություն

Արժեքը (ՀՀ դրամ)

Ջրային ծառայություններ		Փոփոխականների նկարագրություն	Արժեքը (ՀՀ դրամ)
Խմելու ջրի մատակարարում («Վեոյիա Ջուր» ՓԲԸ)			
Ջրամատակարարման ցանցին միացած բնակիչների թվաքանակը			101 954
Ջրամատակարարման ցանցին միացած իրավաբանական անձանց թվաքանակը			7 565
Բնակչություն	մարդ (հազար)		100.5
Ոռոգում			
Հացահատիկ	Ոռոգվող հողատարածք (հա)		20 195
Կարտոֆիլ	Ոռոգվող հողատարածք (հա)		1 817
Բանջարանոցային մշակաբույսեր մշակաբույսեր	Ոռոգվող հողատարածք (հա)		3 511
Դաշտային	Ոռոգվող հողատարածք (հա)		757
Մրգեր և հատապտուղներ	Ոռոգվող հողատարածք (հա)		11 480
Խաղող	Ոռոգվող հողատարածք (հա)		2 681
Ջրաբեհացում			
Խոշոր եղջերավոր կենդանիներ	Կենդանիների գլխաքանակ (հազար)		98.2
Խոզեր	Կենդանիների գլխաքանակ (հազար)		17.3
Մանր եղջերավոր կենդանիներ	Կենդանիների գլխաքանակ (հազար)		78.5
Ձիեր	Կենդանիների գլխաքանակ (հազար)		2.0
Արդյունաբերություն			
Հանքարդյունաբերություն			Ո/Կ
Սննդի արտադրություն			Ո/Կ
Խմիչքի արտադրություն			Ո/Կ
Մանածագործվածքի արտադրություն			Ո/Կ
Այլ			Ո/Կ
Հիդրոէներգետիկա			
ՓՀԷԿ-եր	Հզորություն, ՄՎ		111.5
Որոտանի ՀԷԿ-երի կասկադ	Հզորություն, ՄՎ		404.2

Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

10.4. ԾԱԽՍԱԾԱԾԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

79. Աղյուսակ 13.4-ում բերված են հարավային ՋԿՏ-ի «Սյունիք» ջրօգտագործողների ընկերության առանցքային ֆինանսական ցուցանիշները, որոնք կարևոր են վերլուծելու համար ջրամատակարարման ծառայությունների ծախսաձածկման սկզբունքի կիրառումը:

Աղյուսակ 13. 4. «Սյունիք» ՋՕԸ 2024 թվական ոռոգման ծախսեր, հասույթ, սուբսիդիա և ֆինանսական ճեղքվածք*

Ֆինանսական արդյունքներ	Ընդամենը, հազ. դրամ
Ընդամենը շահագործման և պահպանման ծախսեր, որից՝	225 682,21
Էլեկտրաէներգիա	2 949,04*
Աշխատավարձ	175 967,73

Ֆինանսական արդյունքներ	Ընդամենը, հազ. դրամ
Գործառնական և սպասարկման ծախսեր	282,02
Վճարներ և այլ պարտավորություններ բյուջեի հանդեպ	45 054,06
Այլ ծախսեր	1 429,36
Ոռոգման ծառայություններից հասույթ	42 758,50*
Հավաքագրված գումար	40 357,42*
Ծախսերի և հավաքագրված գումարի հաշվեկշիռ (III-I)	-185 324,79
Պետական բյուջեից սուբսիդիա*	
Վերջնական հաշվեկշիռ (ֆինանսական ճեղքվածք) (IV+V)	-185 324,79
Ծախսի վերականգնման տոկոսը (V+III)/I	18%
Փաստացի ջրառ (հազ խ.մ.)	6 023,62*
Փաստացի կորուստ (հազ խ.մ.)	2 136,48*

80. Աղյուսակ 13.5-ում տրված են հարավային ԶԿՏ-ի ջրօգտագործման տարբեր ոլորտներից ստացված բնօգտագործման վճարները, հավաքագրված գումարները (այդ թվում՝ հարկերը) և ջրօգտագործման համար ոլորտներից ստացված տարեկան համախառն եկամուտները՝ արտահայտված հազ. ՀՀ դրամով:

Աղյուսակ 13. 5. Բնօգտագործման վճարները և ջրօգտագործման ոլորտներից ստացված տարեկան համախառն եկամուտները՝ մլն. ՀՀ դրամ

Ջրօգտագործման ոլորտը	Բնօգտագործման վճարներ (տարեկան, մլն. ՀՀ դրամ)	Ոլորտից ստացված տարեկան համախառն եկամուտը (մլն. ՀՀ դրամ)
Խմելու-կենցաղային ջրամատակարարում	36.27	11160
Ոռոգում	0	231.51
Հիդրոէներգետիկա	0	32 388
Արդյունաբերություն	56.83	218.6
Ձկնաբուծություն	9.59	0.58
Ջրարբիացում	6.5	242.2

ԳԼՈՒԽ 14. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

14.1. Միջոցառումների ծրագրի և ծախսարդյունավետության վերլուծության մեթոդաբանություն

81. Հարավային ՋԿՏ-ում բնապահպանական միջոցառումների ծրագիրը որոշվել է՝ հիմք ընդունելով ՋԿՏ-ում բացահայտված էկոլոգիական ռիսկերը և սահմանված բնապահպանական նպատակները: Միջոցառումների ծրագիրը նախատեսում է գործողություններ, որոնց իրականացման արդյունքում կբարելավվի հարավային ՋԿՏ-ի ջրային մարմինների ջրի կարգավիճակը, ինչպես նաև կպահպանվի «լավ» կարգավիճակը: Միջոցառումների նպատակն է բոլոր ջրային մարմիններում կանխել ջրի կարգավիճակի վատթարացումը:

14.2. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

82. Ազլոմերացիաներում կեղտաջրերի մաքրման կայանների վերակառուցման և կառուցման նախագծանախահաշվային և շահագործման գործընթացի կազմակերպման փաստաթղթերի մշակում: Հարավային ՋԿՏ-ում սահմանվել է 3 ազլոմերացիա՝ Գորիսի, Սիսիանի և Կապանի: Չնայած, որ Սիսիանի ազլոմերացիայի ընտրության ժամանակ չափանիշներից մեկը (բնակչության նվազագույն խտությունն ազլոմերացիայում պետք է կազմի 30 մարդ/հա) չի պահպանվում, այնուամենայնիվ այդ ազլոմերացիան ընտրվել է՝ հիմք ընդունելով կոմունալ-կենցաղային կեղտաջրերից, սննդի արդյունաբերությունից և անասնապահությունից զգալի ճնշումները: Առաջարկվող 3 ազլոմերացիայում ԿՄԿ-ների հնարավոր տեղադիրքը որոշվել է՝ հաշվի առնելով տարածքի ռելիեֆի և կառուցապատման առանձնահատկությունները, և հանդիսանում է տրված ազլոմերացիայի ամենացածր կետը: Այն տոպոգրաֆիական առումով կապահովի կեղտաջրերի հոսքը դեպի ԿՄԿ՝ ինքնահոս եղանակով: ԿՄԿ-ները նախատեսվում է ապահովել մեխանիկական մաքրման, նստվածքի մշակման և կենսաբանական մաքրման համակարգերով:

83. Գորիսի ագլոմերացիա. Գորիս քաղաքում ԿՄԿ նախկինում չի եղել: Գորիսի ագլոմերացիայի համար առաջարկվում է կառուցել ԿՄԿ՝ մինչև 6000 մ³/օր նախագծային հզորությամբ՝ Գորիս քաղաքից 0,4 կմ հոսանքով ներքև, և կոյուղու կոլեկտոր՝ մոտ 8,6 կմ երկարությամբ: Գորիսի ագլոմերացիան և ԿՄԿ-ի առաջարկվող տեղադիրքի վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով և հասանելի է <http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6> հղումով:

84. Սիսիանի ագլոմերացիա. 1986 թ. «Հայկոմուննախագիծ» ինստիտուտի կողմից մշակված՝ Սիսիան քաղաքի գլխավոր կոլեկտորի և կոյուղու մաքրման կայանի նախագծանախահաշվային փաստաթղթերով մինչև 1990 թ. իրականացվել է ընդհանուր շինարարական աշխատանքների ծավալի մոտ 85%-ը: Կեղտաջրերն ինքնահոս եղանակով մաքրման կայան հասցնելու համար կառուցվել էր 1,8 կմ երկարությամբ թունել և տեղադրվել կոլեկտոր: Սակայն այդ աշխատանքները դադարեցվել են ֆինանսավորում չլինելու պատճառով: Սիսիանի ագլոմերացիայի համար առաջարկվում է կառուցել նոր ԿՄԿ՝ մինչև 5000 մ³/օր նախագծային հզորությամբ: Սիսիանի ագլոմերացիան և ԿՄԿ-ի առաջարկվող տեղադիրքի վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով և հասանելի է <http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6> հղումով:

85. Կապանի ագլոմերացիա. Կապան քաղաքում կեղտաջրերի մաքրման նախկին կայանը գտնվում է Սյունիք բնակավայրից 1,7 կմ դեպի հարավ-արևելք: Կապանի ԿՄԿ-ն աշխատել է 1975 թ.-ից մինչև 1990-ական թվականները: Այն նախատեսված է եղել Կապան քաղաքի և Սյունիք բնակավայրի կեղտաջրերի մաքրման համար: Կայանի արտադրողականությունը կազմել է 12000 մ³/օր: Ներկայումս ԿՄԿ-ն գտնվում է քանդված և թալանված վիճակում: Կապանի ագլոմերացիան և ԿՄԿ-ի առաջարկվող տեղադիրքի վերաբերյալ տեղեկատվությունը

ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով և հասանելի է <http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6> հղումով:

14.3. Ծախսերի նախնական գնահատում

86. Հարավային ԶԿՏ-ի կառավարման 6 տարվա ընթացքում միջոցառումների իրականացման ժամկետները բաժանվել են. կարճաժամկետ՝ 1-2 տարվա (2026-2027 թվականներ), միջնաժամկետ՝ 3-4 տարվա (2026-2029 թվականներ) և երկարաժամկետ՝ 5 տարվա (2026-2030 թվականներ) ընթացքում: Հարավային ԶԿՏ-ի միջոցառումների ծրագրի ծախսերի նախնական գնահատումը ներկայացված է 14.1 աղյուսակում, ինչը ենթակա է վերահաշվարկման կոնկրետ միջոցառման իրականացման փուլում: Հարկ է նշել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի պատվերով վերակառուցվում է «Սպանդարյանի» ջրանցքի սկզբնամասի 18.7 կմ երկարությամբ հատվածը, որը ներկայումս գտնվում է համալիր փորձաքննության փուլում, օբյեկտի շինարարության ընդհանուր արժեքը կազմում է 1.18 մլրդ ՀՀ դրամ:

Աղյուսակ 14. 1. Հարավային ԶԿՏ-ի միջոցառումների ծրագիրը, իրականացման ժամանակացույցը և ֆինանսական գնահատման արժեքը

Հ/Հ	Միջոցառման անվանում	Իրականացվող գործողություն	Կատարող	Համակատարող	Ֆինանսական աղբյուր	Միավոր, հատ	Միավորի արժեք, մլն. ՀՀ դրամ	Ծախսերի նախնական գնահատում	Արդյունքային ցուցանիշ
Կարճաժամկետ 2026-2027 թվականներ									
1.	Հարավային ԶԿՏ-ում հիդրոտեխնոլոգիաների վտանգավոր երևույթների նախազգուշացում	2 հիդրոլոգիական դիտակետի ընտրում և վաղ ահազանգման և արագ արձագանքման համակարգի ներդրում և բարելավում՝ սողանքների, սելավների և հեղեղումների վերահաս վտանգների մասին համայնքներին նախազգուշացման համակարգի ստեղծում	ՇՄՆ	Համայնք, ՆԳՆ	Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ	2	45.0	90.0	Արդիականացված 2 հիդրոլոգիական դիտակետ

2.	Հեղեղավտանգ տարածքների քարտեզագրում, մոդելավորում և ռիսկերի գնահատում	Հարավային ՋԿՏ-ի առավել հեղեղավտանգ գետերի նույնականացում և հեղեղահոսների ջրածածկ տարածքների քարտեզագրում	ՆԳՆ	ՏԿԵՆ, ՇՄՆ, Համայնք, Կադաստրի կոմիտե	Միջազգային դոնոր կազմակերպություն ներ	1	75.0	75.0	Քարտեզագրված հեղեղավտանգ գետեր և գնահատված ռիսկեր
3.	Անդրսահմանային ջրային ռեսուրսների ուսումնասիրում	Սյունիքի մարզում տարածաշրջանային իրավիճակի փոփոխություններից ելնելով՝ հարավային ՋԿՏ-ի սահմանամերձ տարածքներում ջրային ռեսուրսների ուսումնասիրում, ռիսկերի գնահատում և ջրային ռեսուրսների անվտանգ օգտագործման համար անհրաժեշտ միջոցառումների առաջարկում	ՇՄՆ	ՏԿԵՆ, Համայնք	Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ	1	10.0	10.0	Անդրսահմանային ջրային ռեսուրսների գնահատված ռիսկեր և միջոցառումների առկայություն
Միջնաժամկետ 2026-2029 թվականներ									
4.	Արտակարգ իրավիճակների կանխարգելում	Սիսիան քաղաքի տարածքում Որոտան գետի հունի տիղմից մաքրում՝ մոտ 10000 մ ³	ՇՄՆ	ՆԳՆ, Համայնք	Համայնքային բյուջե, օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ	10000 մ ³	0.0018	18.0	Հեղեղումների կանխարգելում
Սիսիան քաղաքի Շիրակի փողոցի հարևանությամբ Սիսիան գետի հենապատի կառուցում՝ մոտ 200 մ ²		200 մ ²				0,245	49.0		
Ույծ Բնակավայրի տարածքում Այրիգետ գետի հունի մաքրում՝ մոտ 2500 մ		2500 մ				0.0018	4.5		
Բնունիս բնակավայրի տարածքում Այրիգետ գետի հունի մաքրում՝ մոտ 2000 մ		2000 մ				0.0018	3.6		

	Ախլաթյան բնակավայրի տարածքում Այրիգետ գետի հունի մաքրում՝ մոտ 5000 մ				5000 մ	0.0018	9.0	
	Աշոտավան բնակավայրի տարածքում Սիսիան գետի հունի մաքրում՝ մոտ 1500 մ				1500 մ	0.0018	2.7	
	Բռնակոթ բնակավայրի տարածքում Սիսիան գետի հունի մաքրում՝ մոտ 2000 մ				2000 մ	0.0018	3.6	
	Դաստակերտ ավանի տարածքում Այրիգետ գետի հունի մաքրում՝ մոտ 1000 մ				1000 մ	0.0018	1.8	
	Նժդեհ բնակավայրի տարածքում Այրիգետ գետի հունի մաքրում՝ մոտ 400 մ				400 մ	0.0018	0.72	
	Քարահունջի հեղեղատարի Հունի մաքրում 4 մ լայնությամբ 0,5 մ խորությամբ, 200 մ երկարությամբ, ափի ամրացում գաբիոնե շարվածքով՝ 150 մ երկարությամբ				150 մ	0.245	36.75	
	Գեղի բնակավայրի տարածքում Գեղի գետի հունի մաքրում՝ մոտ 500 մ				500 մ	0.0018	0.90	
	Կապան քաղաքում Կավարտ գետի հունի մաքրում 2 մ լայնությամբ 0,6 մ խորությամբ, 3000 մ երկարությամբ, ինչպես նաև ափի ամրացում գաբիոնե շարվածքով 150 մ երկարությամբ				3000 մ 150 մ	0.0018 0.245	5.40 36.75	

		Սյունիք բնակավայրի տարածքում Արծվանիկ գետի հունի մաքրում՝ մոտ 900 մ				900 մ	0.0018	1.62	
		Մեղրի քաղաքի տարածքում Մեղրիգետի հունի մաքրում՝ մոտ 900 մ, հենապատի կառուցում գաբիոնային շարվածքով՝ մոտ 480 մ				900 մ 480 մ	0.0018 0.245	1.62 117.6	
5.	Նիտրատներից խոցելի տարածքների գնահատում և տարածքների հայտնաբերում	Նոր դիտացանցի ստեղծում և հաստատում	ՇՄՆ		Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ	-	-	11.0	Դիտացանցի առկայություն
6.	Կավարտի չշահագործվող հանքավայրի ռեկուլտիվացում և Կավարտ գետի էկոլոգիական կարգավիճակի վերականգնում	Ուսումնասիրում, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	ՇՄՆ	ՏԿԵՆ	Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ	-	-	5.0	Նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայություն
7.	Սպանդարյանի ջրանցքի վերանորոգման	Ուսումնասիրում, նախագծահաշվարկային փաթեթի կազմում և վերանորոգում	ՏԿԵՆ	-	Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ	34 կմ	60	2040.0	Սպանդարյանի վերանորոգված ջրանցք
8.	Կոյուղաջրերի մաքրման նախագծում	ԶՊՄԿ-ի տարածքից և Քաջարան համայնքից առաջացող կոյուղաջրերի մաքրման կայանի նախագծում	ՏԿԵՆ	Համայնք, ԶՊՄԿ	Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ, ԶՊՄԿ	1	10.0	10.0	Նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայություն

9.	Գյուղատնտեսության ոլորտում ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության տրամադրում	Հարավային ՋԿՏ-ի տարածքում	ԷՆ	Համայնք	Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ	6	2.0	12.0	Ոռոգման արդի տեխնոլոգիաների ներդրում
Երկարաժամկետ 2026-2030 թվականներ									
10.	Ազլոմերացիաներում կեղտաջրերի մաքրման կայանների վերակառուցման և կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և կառուցում (ԿՄԿ-ի մեխանիկական մաքրման, նստվածքի մշակման բլոկների, կենսաբանական մաքրման համակարգերի կառուցում)*	Գործարար կառուցել ԿՄԿ՝ մինչև 6000 մ ³ /օր նախագծային հզորությամբ	ՏԿԵՆ	Համայնք, ՇՄՆ	ՀՀ պետական բյուջե, օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ (ֆինանսական միջոցների առկայության դեպքում)	1 հատ	2700.0	2700.0	Ջրային ռեսուրսների աղտոտման նվազեցում
Սիսիանում կառուցել նոր ԿՄԿ, մինչև 5000 մ ³ /օր նախագծային հզորությամբ		1 հատ				2100.0	2100.0		
Կապանում կառուցել նոր ԿՄԿ, մինչև 12000 մ ³ /օր նախագծային հզորությամբ		1 հատ				4200.0	4200.0		
11.	Ազլոմերացիաներում կոյուղու կոլեկտորի կառուցում*	Գործարար կոյուղու կոլեկտորի մոտ 8,6 կմ երկարությամբ կառուցում	ՏԿԵՆ	Համայնք, ՇՄՆ	ՀՀ պետական բյուջե, օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ (ֆինանսական միջոցների առկայության դեպքում)	8.6 կմ	85.0	731.0	Ջրային ռեսուրսների աղտոտման նվազեցում
Սիսիանում կոյուղու կոլեկտորի մոտ 17,2կմ երկարությամբ կառուցում		17.2 կմ				85.0	1462.0		
Կապանում կոյուղու կոլեկտորի մոտ 21,4 կմ երկարությամբ կառուցում		21.4 կմ				85.0	1819.0		
12.	Մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտացանցի արդիականացում և ընդլայնում	Հարավային ՋԿՏ-ում գործող բոլոր 9 հիդրոլոգիական դիտակետի վերազինում	ՇՄՆ		Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ	9	19.6	176.4	Արդիականացված հիդրոլոգիական դիտակետեր
Նոր հիդրոլոգիական դիտակետերի կառուցում. 1.Սիսիան գետի վրա, Տոլորսի ջրամբարից գետի հոսանքով վերև		3				25.6	76.8		

		2.Ողջի գետի վրա, Քաջարանի տարածքում 3.Որոտան գետի վրա, Անգեղակոթի ջրամբարից հոսանքով վերև		-					
		Ստորերկրյա 22 դիտակետի ստեղծում, որից՝ 4 հորատանցք, 1 քահրիզ, 17 աղբյուր				22	5.0	110.0	
13.	Ջրամբարաշինություն	- Մեղրիգետի գետավազանում՝ Լիճք բնակավայրի մոտ, նախատեսված 3.93 մլն մ ³ ծավալով Լիճքի ջրամբարի կառուցում	ՏԿԵՆ	ՇՄՆ, Համայնք	ՀՀ պետական բյուջե, օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ	1 հատ	10 300.0	10 300.0	Ջրային ռեսուրսների կուտակում
- Որոտանի գետավազանում՝ Խնձորեսկ բնակավայրի մոտ, նախատեսված 5.2 մլն մ ³ ծավալով Խնձորեսկի ջրամբարի իրագործելիության ուսումնասիրություն և նախագծում		1 հատ				100.0	100.0		
14.	Ձորատեղ (Պարազամի) դատարկ ապարների լցակույտերի ընթացիկ ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացում	Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացում՝ համաձայն ՋՊՄԿ-ի ռեկուլտիվացիոն նախագծի	«Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ	ՏԿԵՆ, ԲԸՏՄ, ՇՄՆ	«Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ	շուրջ 27 հա	-	Համաձայն ՋՊՄԿ-ի ռեկուլտիվացիոն նախագծի	Ջրային ռեսուրսների աղտոտման նվազեցում
15.	«Լիճքվազ-Թեյի» ոսկու բազմամետաղային հանքավայրի ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացում	Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացում՝ համաձայն ԲՓՆ0144 16.08.2023 թ.	«Լիճքվազ-Թեյի ԲՄՀ»	ՏԿԵՆ, ԲԸՏՄ, ՇՄՆ	«Լիճքվազ-Թեյի ԲՄՀ»	շուրջ 14 հա	-	Համաձայն ԲՓՆ0144 16.08.2023 թ.	Ջրային ռեսուրսների աղտոտման նվազեցում
16.	«Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի արտադրական կեղտաջրերի վերաբերյալ միջոցառումների իրականացում	Արձվանիկի պոչամբարի հաջորդ շահագործման պլանավորվող նախագծում նախատեսել պոչամբարից բաց թողնվող ջրերի մաքրման կայանի կառուցման (նախագծման և շահագործման) աշխատանքները կամ ապահովել շրջանառու ջրամատակարարման համակարգի կիրառում	«Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ	ՏԿԵՆ, ՇՄՆ, ԲԸՏՄ	«Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ	1	-	համաձայն պոչամբարի շահագործման նախագծի	Ջրային ռեսուրսների աղտոտման նվազեցում

		Արտադրական ջրերի շրջանառու համակարգի վերակառուցում	«Ձանգեզ ուրի ՊՄԿ» ՓԲԸ	ՏԿԵՆ, ՇՄՆ, ԲԸՏՄ	«Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ	1	-	համաձայն ԲՓՈ125 16.05.2025 թ.	
17.	Նոր աղբավայրերի կառուցում	Թափոնների վերամշակման փոքր կայանների կառուցում և սանիտարական աղբավայրերի ստեղծում. Սիսիանում (2 հա), Գորիսում (5 հա), Կապանում (13 հա), Ագարակում (3 հա) և Մեղրիում (2 հա)	Համայնք	ՏԿԵՆ	Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ	25 հա	102.5	2562.5	Ջրային ռեսուրսների աղտոտման նվազեցում
18.	Ջրային ռեսուրսների ուսումնասիրում և գնահատում	Հարավային ԶԿՏ-ի ստորերկրյա ջրային ռեսուրսների ուսումնասիրում և գնահատում	ՇՄՆ	ՏԿԵՆ, ԲԸՏՄ	Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ	1	100.0	100.0	Գնահատված ջրային ռեսուրսներ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 28,984.26 ՀՀ դրամ, որից՝ 26,412.0 ՀՀ պետական բյուջե և (կամ) օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ, իսկ մնացածը՝ համայնքային բյուջե, օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ, միջազգային դոնոր կազմակերպություններ և մասնավոր ընկերություններ

* Հաշվի առնելով միջոցառումների իրականացման համար պահանջվող ֆինանսական մեծ ներդրումները՝ նշված միջոցառումները չիրականացնելու դեպքում դրանք կարող են տեղափոխվել հարավային ջրավազանային կառավարման տարածքի պլանի հաջորդ փուլ:

**14.3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
ԶՊԱՀԱՆՁՈՂ**

87. Հարավային ԶԿՏ-ի լրացուցիչ միջոցառումները ներկայացված են աղյուսակ 14.2-ում:

Աղյուսակ 14. 2. Հարավային ԶԿՏ-ի լրացուցիչ միջոցառումները

N	Լրացուցիչ միջոցառման անվանումը	Ժամկետը
1.	Կարգավորել Գեղիի ջրամբարի շահագործման և ջրի բացթողումների ռեժիմը <i>Գեղիի ջրամբարը հանձնված է Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին, որը չի պահպանում ջրամբարի ռեժիմը և ջրամբարից ջրի անկանոն բացթողումներ է իրականացնում: Անհրաժեշտ է պահպանել ջրամբարից բացթողումների ռեժիմը:</i>	Կարճաժամկետ 2026-2027 թվականներ
2.	Մշակել և հաստատել «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ
3.	Մշակել և հաստատել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 488- Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծ	2026 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ
4.	Մշակել և հաստատել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N 64 – Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծ	2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ
5.	Մշակել և հաստատել ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատման մեթոդաբանություն	2027 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ
6.	Սահմանել մեխանիզմներ խմելու ջրի ջրհավաք ավազանի (բնապահպանական) մոնիթորինգի և վերջինիս արդյունքները խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպությանը տրամադրելու համար՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրում ներառված Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2020/2184 հրահանգը:	2028 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ

ԳԼՈՒԽ 15. ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ, ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ

88. Հարավային ԶԿՏ-ի կառավարման պլանի կազմման ժամանակ հիմք են հանդիսացել ջրային ռեսուրսներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտը և հարավային ԶԿՏ-ում գործող համայնքների զարգացման ծրագրերը, ռազմավարությունները, հայեցակարգերը, պլանները և այլ ծրագրային փաստաթղթեր: Ստորև ներկայացվում են վերը նշված փաստաթղթերը.

1) «Զրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ ծրագիր) ներառում է Զրի ազգային ծրագրի խնդիրներն իրականացնելու համար կարճաժամկետ (մինչև 2010 թվականի), միջնաժամկետ (2010-2015 թվականներ) և երկարաժամկետ (2015-2021 թվական) միջոցառումների ծրագրեր.

2) Կառավարության հնգամյա (2021-2026 թվականներ) միջոցառումների ծրագրում ներառված են Խնձորեսկի և Լիճքի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման և կառուցման աշխատանքները: Նշված միջոցառումները ներառված են նաև սույն ջրավազանային կառավարման պլանի միջոցառումների ծրագրում.

3) Կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրության քաղվածով հաստատվել է Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը, ինչը սակայն 2021 թվականին անվավեր է ճանաչվել: Ռազմավարությանը ներառում էր տարբեր ոլորտների զարգացման տեսլականը և ռազմավարական մոտեցումները: Ռազմավարությամբ բնական պաշարների և ջրային ռեսուրսների ռացիոնալ և կայուն օգտագործումը հանդիսանում էր ռազմավարության գերակա ուղղություն.

4) ավագանու որոշումներով հաստատված են Կապան (2022 - 2026 թվականներ), Գորիս (2022 - 2027 թվականներ), Տաթև (2021-2026 թվականներ), Քաջարան (2023-2027 թվականներ), Սիսիան (2023-2027 թվականներ), Մեղրի (2022-2026 թվականներ) և Տեղ (2022-2026 թվականներ) համայնքների զարգացման ծրագրերը: Համայնքների զարգացման ծրագրերը հիմնականում ներառում են ոռոգման և խմելու համակարգերի կառուցման աշխատանքները:

5) Աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների ռազմավարությունը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1717-Լ որոշմամբ: Ռազմավարությունն ընդգրկում է աղետների ռիսկի կառավարման ոլորտում պետական քաղաքականության շրջանակը՝ մասնավորապես աղետների ռիսկի կանխարգելմանը, պատրաստվածության բարձրացմանը, արտակարգ իրավիճակներին արձագանքմանը, կանխարգելմանը և դրանց հետևանքների նվազեցմանը, վերացմանն ու հետադետային վերականգնմանն ուղղված գործընթացները: Ռազմավարությամբ նախատեսված է Սյունիքի մարզում տեղադրված կամ վերազինված հիդրոոգերևութաբանական ավտոմատացված կայանների առկայություն:

6) Կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվական), Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվական) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին: Ռազմավարությամբ Մեղրի ՀԷԿ-երի կառուցումը հատկորոշված է որպես պետական նշանակության ծրագիր և կառուցվելու է որպես համակարգային նշանակության կայան, երբ էլեկտրաէներգետիկական համակարգում առաջանա այդպիսի հզորությունների կառուցման անհրաժեշտություն: Միջոցառումների ծրագրում ներառված է նաև փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման կետը, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ

հարավային ԶԿՏ-ի գետերի հիդրոէներգետիկ պոտենցիալը գրեթե ամբողջությամբ օգտագործված է.

7) ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 3-ի N 1692-Լ որոշումը:

ԳԼՈՒԽ 16. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

89. Համաձայն ԵՄ ԶՇԴ-ի՝ ջրավազանային կառավարման պլանի մշակումը ենթադրում է մասնակցային մոտեցման կիրառում, որը միավորում է տարբեր տեսակետներ ունեցող շահառու կողմերին՝ որոշելու, թե ինչպես պետք է իրականացվի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումն ու օգտագործումը: Հարավային ԶԿՏ-ի պլանի լրամշակման ընթացքում կազմակերպվել է երկու հանրային լսում: Հանրային լսումների և խորհրդատվական գործընթացների ընթացքում կիրառվել են հարցաթերթիկներ, որոնց միջոցով հանրային ներկայացուցիչներից հավաքվել են ջրային ռեսուրսներին առնչվող հարցերի պատասխանները, առաջարկները և խորհուրդները:

90. **Առաջին հանրային լսում:** Առաջին հանրային լսումը տեղի է ունեցել Գորիսում 2024 թվականի մարտի 27-ին, որի ժամանակ հանրությանը ներկայացվել են հարավային ԶԿՏ-ի կառավարման տարածքի ջրային ռեսուրսների վրա էական ճնշումները և ազդեցությունները, ինչպես նաև ջրային մարմինների տարանջատումը: Հանրային լսումների ընթացքում 29 շահառու լրացրել է հարավային ԶԿՏ-ի ջրային ռեսուրսների վրա էական ճնշումների բացահայտման և ազդեցությունների գնահատման վերաբերյալ հարցաթերթիկ: Հարցաշարում շահառուներն արտահայտել են իրենց կարծիքը և նշել առաջարկներ՝ ուղղված ջրավազանի հիմնական խնդիրների լուծմանը: Դրանք են՝ գետավազաններում ջրօգտագործումն արդյունավետ չի կատարվում, բացակայում է ոռոգման ցանցը, խմելու ջրի ցանցը մաշված է, ռացիոնալ ջրօգտագործման համար ներդնել ջուր խնայող տեխնոլոգիաներ և ջրամբարաշինության միջոցով կարգավորել գետային հոսքերը, մաքրման կայանների

բացակայության հետևանքով ջրային ռեսուրսներն աղտոտվում են կենցաղային կեղտաջրերով, արդյունաբերական և հանքարդյունաբերության գործունեությունից առաջանում են զգալի քանակի թափոններ և կեղտաջրեր, գետերի որոշ հատվածներում էկոլոգիական թողքը չի պահպանվում, աղետների դեմ պայքարի մեթոդներ չեն կիրառվում:

91. Երկրորդ հանրային լսում: Հանրային երկրորդ լսումը տեղի ունեցավ 2024 թվականի մայիսի 31-ին Երևանում: Մասնակիցների քանակը՝ 64: Երկրորդ հանրային լսման նպատակն էր ներկայացնել հարավային ԶԿՏ-ի կառավարման պլանի թարմացման աշխատանքները՝ ջրային ռեսուրսների վրա ճնշումները և ազդեցությունները, ինչպես նաև ջրային ռեսուրսների բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիրը: Հանդիպման ընթացքում մասնակիցների կողմից հնչեցին առաջարկություններ՝ մասնավորապես ազլումերացիաներում կեղտաջրերի մաքրման կայանի կառուցումը պլանավորել փուլային մակարդակով, այսինքն՝ մեխանիկական, կենսաբանական և տիղմի մաքրում, Գեղիի ջրամբարը հանձնվում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին, որը չի պահպանում ջրամբարի ռեժիմը և ջրամբարից ջրի անկանոն բացթողումներ է իրականացնում: Անհրաժեշտ է պահպանել ջրամբարների ռեժիմների կարգավորումը, Կավարտ գետի վրա կառուցել տեղական ջրի մաքրման կայան, որը կմաքրի հանքարդյունաբերությամբ աղտոտված ջրերը:

92. Հանրային լսումների երկու փուլերի ամփոփում: Երկու հանրային լսումների հարցման արդյունքները, առաջարկությունները կարող են համարվել ներկայացուցչական՝ հարավային ԶԿՏ-ի համար: Առաջին հանրային լսումը նպատակ ուներ քննարկելու հարավային ԶԿՏ-ի ջրային ռեսուրսների վրա ճնշումների և ազդեցության հիմնական գործոնները, իսկ երկրորդը՝ ջրային մարմինների համար էկոլոգիական նպատակներին հասնելու միջոցառումների ծրագիրը: Հանրային լսումների ընթացքում մասնակիցների կողմից ի հայտ եկած բոլոր խնդիրների ու առաջարկությունների հիման վրա լրամշակվել են Հարավային ԶԿՏ-ի կառավարման պլանի համապատասխան գլուխները:

93. Ընդհանուր առմամբ ՋՇԴ 14-րդ հոդվածի հիման վրա անցկացված հանրային լուսնների գործընթացն ու արդյունքները ապացուցեցին, որ հասարակության ներգրավումը շատ կարևոր և արդյունավետ ընթացակարգ է, ինչպես ջրավազանի կառավարման պլանավորման համար, այնպես էլ իրականացման փուլերում:

94. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 4-րդ հոդվածի՝ նախագիծը հանդիսանում է հիմնադրույթային փաստաթուղթ: Նույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն ենթակա է ուղղակի գնահատման և փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ընթացքում անցկացվել է հանրային խորհրդակցություն, որին մասնակցել են ազդակիր համայնքները, շահագրգիռ մարմինները և գիտական հաստատությունները: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության արդյունքում ստացել է դրական եզրակացություն:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ ՄՁԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՊ	ազգային պարկ
ԱԶՄ	արհեստական ջրային մարմին
ԱՎՕ	արտադրական վտանգավոր օբյեկտ
ԲՀՊՏ	բնության հատուկ պահպանվող տարածք
ԳԱՏՕ	«Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» ծրագիր
ԳՎՕՄ	գյուղատնտեսության վարման օրինակելի մեթոդներ
ԵՄ	Եվրոպական միություն
ԶՊՄԿ	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»
ԹԿՊ	թթվածնի կենսաբանական պահանջարկ
ԹՔՊ	թթվածնի քիմիական պահանջարկ
ԽՓԶՄ	խիստ փոփոխված ջրային մարմին
կմ	կիլոմետր
ԿՄԿ	կեղտաջրերի մաքրման կայան
կՎտժ	կիլովատ ժամ
ԿՓՓՄԽ	կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խումբ

հա	հեկտար
ՀԷԿ	հիդրոէլեկտրակայան
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԽՍՀ	Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՀՏԿ	հիդրոտեխնիկական կառուցվածք
ՀՋՌԿԲ	«Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բարելավում» ծրագիր
ՀՌԶՄ	հավանական/պոտենցիալ ռիսկային ջրային մարմին
ՀՕԿ	Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպություն
մ	մետր
ՄԳՇՄՊ	«Միջազգային գետավազանների շրջակա միջավայրի պահպանություն» ծրագիր
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
մմ	միլիմետր
մՎտ	մեգավատ
ՆԽ	նախարարների խորհուրդ
ՇՄԱԳ	շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՆ	շրջակա միջավայրի նախարարություն
ՈԿԱՀ	որոշումների կայացմանն աջակցման համակարգ
ՉՀՋ	չհաշվառվող ջուր
ՊԱ	պետական արգելոց
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՋԹ	ջրօգտագործման թույլտվություն
ՋԿՏ	ջրավազանային կառավարման տարածք
ՋԿՊ	ջրավազանային կառավարման պլան
ՋՄ	ջրային մարմին
ՋՇԴ	Ջրի շրջանակային դիրեկտիվ
ՋՌԿՎ	ջրային ռեսուրսների կառավարման վարչություն
ՋՕԸ	ջրօգտագործողների ընկերություն
ՌԶՄ	ռիսկային ջրային մարմին
ՍՊԸ	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՍՋՄ	ստորերկրյա ջրային մարմին
ՏԻՄ	տարածքային կառավարման մարմին
ՏԿԵՆ	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՀԾ	տարեկան համարժեք ծախս
ՓԲԸ	փակ բաժնետիրական ընկերություն
ՓՀԷԿ	փոքր հիդրոէլեկտրակայան

ՕԿՋ

օրվա կարգավորիչ ջրամբար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ